Զ. ՏԱՐԻ — ԹԻՒ 1,588 — Կ. ՊՈԼԻՍ. — 1901, ԴԵԿՏԵՄ." 14—27 — 16 ՌԱՄԱԶԱՆ 1319 — 14 ՔԵԱՆ." ԷՎ." 1317 — ՇԱԲԱԹ

«بوزانتيون»
ارمنيجه يومى وسياسى غزته. صاحب امتياز و مدير مسئول
بوزانت كچيان
مطبعه و اداره خانه سى باب عالى جاده سنده ۲۳-۲۵ نومرولو
دائره مخصوصه ده در

ԱՄՍԱԿԱՆ ԲԱԺԱՆԵԳԻՆ
Թուղթ յոլոպալով 12 ղրշ.
ՏԱՐԵԿԱՆ » » 7 ՄԵՃ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ 36 ՖՐ.
» ՎԵՑԱՄՍ. 18 ԽՈՒՄՍ. 9 ՖՐ.
ԱՆԳԼ. ԼԻՐԱ 119 ղրշ. — 20 ՖՐ. ՆԱՊ.
94 1/2 ղրշ. — ՔՐԻՏԻԹ 55 ղրշ.

Բիւզանդիոն

ՀԱՍԱՐԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆԵԳԻՆ 6 ՄԵՃ.
ՎԵՑԱՄՍԵԱՅ 3 »
ԵՌԱՄՍԵԱՅ 1 1/2 »
ԶԵՒՔԵ. ԴՈՐԾԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ 20 փարա
Նոյն պայմանք և Գաւառի համար: ԱՐԴԵՑ ԿԵՆՏՐՈՆ
Բովանդակութիւնը մեր վրայ:

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

PUZANTION
Journal Arménien Quotidien, Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

ԱԶԳ. ՀԱՐՑԵՐ

ԱՂԹԱՄԱՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Այնպիսի ատեն մը որ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, կատարուած նորոգ ընտրութիւնն և յարակից ու նախընթաց, ինչպէս և հետեւորդ բոլոր պարագաներն օրուան թերթերուն մեծագոյն նիւթը կ'կազմեն, աւելորդ չըլլար կարծեմ պահ մ'ալ Աղթամարի Կաթողիկոսութեանը վրայ դարձնել հասարակային ուշադրութիւնը, քանի որ ան ալ մեր Եկեղեցւոյ հօտապետական կարեւոր Աթոռներէն մին է, որ գրեթէ Սսոյ Աթոռին հետ մերձաւորապէս միեւնոյն ժամանակ Թափուր եղած է, որովհետեւ Մկրտիչ Կաթողիկոսէն շատ հեռու ժամանակի մը մէջ չէ որ Խաչատուր Կաթողիկոսն ալ աշխարհէ հրաժեշտ առած է: Այդ երկու Կաթողիկոսները, մին Արեւելքէն, միւսն Արեւմուտքէն, երբ դեռ կենդանի էին, այնչափ խօսիլ կուտային երբեմն իրենց վրայ գրեթէ համանման իմաստով, այսինքն իրենց անհոգութեան ու անձնասիրութեան նմանօրինակ նկարագրութիւններովը, որ կ'արժէ երկու Աթոռներուն վրայ միանգամայն խօսիլ այն պահուն, որ մէկին յաջորդը կ'ընտրուի, և միւսին ալ ընտրութիւնը պիտի խնդրուի հարկաւ օր մը:

Աղթամարի Կաթողիկոսութիւնը Կիլիկեանին չափ ընդարձակ վիճակներ ու թեմեր չունի թէպէտ, ո՛չ ալ անոր չափ բազմաթիւ ու հարուստ ժողովուրդ, բայց անկէ աւելի պատկառելի հնութիւն ունի, սկսած ըլլալով 1113էն, հաշուելով Դաւիթ Թոռնեցի Կաթողիկոսէն, որ առաջին Աթոռակալ հօտապետն է Աղթամարի, մինչ Կիլիկեան Կաթողիկոսութիւնը, իբրեւ զուտ տեղական և ոչ ընդհանրական Հայրապետութիւն, սկսած է 1441էն, երբ Գրիգոր Թ. Մուսաբէգեանց Կաթողիկոսը չյօժարեցաւ, իրեն եղած հրաւէրն ընդունելով՝ Էջմիածին երթալ և Ս. Լուսաւորչի բնիկ Աթոռին վրայ իսկ թագուիլ իբրեւ ընդհանրական Հայրապետ, որով Արեւելեան Հայերը Կիրակոս Ա. Վիրապեցին ընտրեցին իբր համազգային Կաթողիկոս, որուն հետեւանքով Սսոյ Աթոռն իր ընդհանրական հանգամանքն ու նշանակութիւնը կորսնցնելով, եղաւ լոկ Կիլիկեան մասնաւոր Կաթողիկոսութիւն, շարունակուելով յաջորդաբար մինչեւ հիմա, ինչպէս իր անընդհատ շարունակութիւնն ունեցած է նաեւ Աղթամարի մասնաւոր Կաթողիկոսութիւնը, որ սկիզբէն ի վեր պահած է իր տեղական, մասնաւոր գոյնն և նշանակութիւնը, և ոչ երբեք յաւակնած է ընդհանրական Հայրապետի տիտղոս և հանգամանք տալ իրեն, մինչդեռ Գրիգոր Մուսաբէգեանցի յաջորդները շատ անգամ այդպիսի թեկնածութիւն ըրած են և վէճերու եւ հակաճառութիւններու, են. են. դուռ բացած են:

Բայց այս խնդիրները կամ անոնց վերաբերող պատմութիւններն երեւան բերելու համար չէ որ այսքան մ'ակնարկութիւն ընելու հարկ զգացինք, ոչ ալ կ'ուզենք կամ պատշաճ կ'գտնենք սա խնդիրն յուզել թէ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ իբր ընդհանրական Հայրապետութիւն գոյութիւն ունեցած ատենը՝ պատշա՞ճ էր որ Աղթամարայ Թեմականները Գրիգոր Գ. Պահլաւունի Կաթողիկոսին 20 տարեկան հասակի մէջ ընտրուիլը պատճառ բռնելով՝ մերժէին զայն ճանչնալ և իրենց Վիճակին մէջ Կաթողիկոսական նոր Աթոռ մը հաստատէին նախաձեռնութեամբ վերյիշուած Դաւիթ Թոռնեցիին, որ կ'ըլլայ այդպիսով Ա. Կաթողիկոս Աղթամարայ: Նոյնպէս աւելորդ կ'համարինք դիտել տալ թէ ժամանակին հանգամանքներն այնպէս էին որ առանց այսպիսի պատճառի մը կամ պատրուակի մը իսկ գրեթէ հարկ էր որ Արեւելեան գաւառներու Հայերը մասնաւոր Կաթողիկոսութիւն մ'ունենային, զի Կիլիկիոյ Աթոռը պէտք եղած միջոցներ և դիւրութիւններ չունէր իր Հովուապետական իշխանութիւնը տարածել իր սահմաններէն դուրս գտնուող այդ կողմերու Հայ եկեղեցիներուն վրայ, որ մեծամասնութիւնը կ'կազմէին և իրենց հոգեւոր ու բարոյական մատակարարութիւնն անընդմէջական կերպով շատ անգամ չէին կրնար ընդունիլ Հռոմկլայի կամ Սիսի մէջ կղզիացած բնակող Կաթողիկոսներէն, թէպէտ և ասոնք Ընդհանրական Հայրապետներն էին ըստ օրինի:

Բայց կայ պարագայ մը՝ յոյժ պատուաբեր մեր Նախնեաց եկեղեցասիրութեան համար՝ զոր կարելի չէ զանց ընել և չյիշել այս առթիւ, այսինքն այն նախանձախնդրութիւնը՝ զոր ունեցած են անարատ ու անփոփոխ պահելու մասին մեր Եկեղեցւոյ Նախնի բոլոր սուրբ ու նուիրական աւանդութիւնները, որքան ալ երեք Աթոռներու կամ Հայրապետութիւններու բաժնուած եղեր են: Վարդապետական, դաւանական կամ հաւատքի վերաբերեալ ոչ մէկ փոփոխութիւն չեն մտցուցած այդ երեք Աթոռներէն ոչ մէկը, որով բաժանումը լոկ վարչական եղած է, այսինքն կեղեւային և ոչ արմատական:

Իսկ երբ ի յուշ բերուի թէ Արեւմտեան, այսինքն Կիլիկիոյ Աթոռին հովուած Հայ եկեղեցիներն ո՛րքան առիթներ ունէին Ունիթոռներու ջանքերով Լատինականութեան յարելու մոլորելու փորձութիւն ունենալ, այն ատեն կ'զգացուի թէ կենսական պէտքի մը չափ կարեւոր ու անհրաժեշտ էր Աղթամարայ Կաթողիկոսութեան՝ այսինքն Կիլիկիոյ շրջանակէն դուրս մնացող Արեւելեան Հայոց ուրոյն Հայրապետութեան մը գոյութիւնը, ինչպէս որ այժմ ալ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պէտք է՝ մայր Աթոռոյ հանդէպ:

Այլ ձգենք այս խորհրդածութիւնները, մանաւանդ որ Աղթամարայ Աթոռին շարունակութիւնը խնդիր ընող չկայ, և դառնանք ըսել թէ որչափ որ անիկա Ատանայի, Մէրսինի, Տարսոնի, Սիսի, Հաճընի, Մարաշի, Հալէպի, Այնթապի, Քիլիսի, Կիւրինի, Եոզկատի, Տիվրիկի են. նման քաղաքներ չունի իր իրաւասութեան ներքեւ, այլ իր ունեցած վիճակներն ու թեմերն ալ իրենց առանձնայատուկ հանգամանքներն ու արժէքն ունին, որոնք ցրուած են Վանայ, Պիթլիսի, Տիարպէքիրի և Մուսուլի կուսակալութեանց մէջտեղերը, առանց ունենալու գոնէ մէկ կարեւոր քաղաք, այլ ամէնն ալ գիւղ, առ առաւելն գիւղաքաղաք են կամ աւան: Այդ վիճակներու և թեմերու անուններն անգամ իրենց տեղական խսկատիպ հնչումներով կ'զգացնեն թէ ի՛նչպիսի հօտ մ'է Աղթամարայ թեմական ժողովուրդը: Ահա այդ թեմերու գլխաւորները.— Ոստան, Գաւաշ, Կեցան, Կարկառ, Կէլէեկուզան, Նորտուզ, Շատախ, Խիզան, Շիրվան, Մոկս, Ոզիմ, Պէրվարի, Սպարկերտ, Խասխըր, Արօշ, Տէշ, Ծըղիրէ, Նաեւ Վանայ ծովու արեւելակողմի Հ. Զորը, են. Այլ և Վան քաղաքէն մէկ ժամ հեռի կարգ մը գիւղեր որ Աղթամարի կ'վերաբերին, բայց վարչական կառավարութեամբ Վանայ Առաջնորդարանէն կ'մատակարարուին: Աղթամարայ թեմերու մեծ մասին խմալուր անուններէն իսկ յայտնի կ'ըլլայ որ անոնց մէկ մասի ժողովուրդն իր մայրենի լեզուն կորսնցուցած է. ինչպէս է Կիլիկիոյ գրեթէ բոլոր ժողովուրդը: Անշուշտ շատ աւելի փոքր վիճակ մ'է Աղթամարայ Կաթողիկոսութիւնը քան Կիլիկիոյ, բայց իր հօտն ոչ նուազ եկեղեցական ջերմ սիրով և աւանդական հոգիով կապուած է իր Աթոռին հետ, որոյ նիստը ծիծաղախիտ ծովուն գեղածուփ կղզիին մէջ շատ աւելի հրապուրիչ և յանկուցիչ է: Ինչպէս և Աղթամարի Կաթողիկոսական Մայր եկեղեցին, Ս. Նշան կամ Ս. Խաչ, շատ աւելի հոյակապ ու փառաւոր է քան Սսոյ Ս. Սոփիա կամ Ս. Երրորդութիւն կաթողիկոսանիստ եկեղեցին, մանաւանդ որ 1000 տարուան պատկառելի հնութիւն մ'ալ ունի ծովածիծաղ Կաթողիկոսարանը: Իսկ օդի և կլիմայի գեղեցկութեան, տեսարանին վսեմութեան ու բնական վայելչութեան կողմէ անհամեմատելի առաւելութեամբ օժտուած է: Այլ ինչ որ ամէնէն աւելի կ'յատկանշէ կղզեկնակ այս Կաթողիկոսութեան թեմական հանգամանքը, իր հօտին սիրտն ու հոգին է որ հաւատոյ անհուն և անսահման պատկառանքով ու ակնածութեամբ կապուած է իր հոգեւոր Աթոռին հետ 8 դարէ ի վեր, ընելով զայն պաշտամունքի առարկայ՝ իբր վառարան իր հաւատքի ու կրօնի լոյսին և մռուկէն: Աշխարհի ո՛չ մէկ կողմ թերեւս այնչափ սիրով, համակրութեամբ ու հոգեյոյզ զգացմամբ կը հնչուի Կաթողիկոս բառը, որչափ Աղթամարայ այս պարզամիտ ու անկեղծ հաւատացեալ հօտին բերնէն, զի իր բովանդակ էութեան ու հոգեկան հաճակ գոյութեան հետ այնպէս շաղախուած և կապուած է Կաթողիկոս անունը, որ չի կրնար ըմբռնել թէ առանց անոր կրնայ կրօն և հաւատք ըլլալ: Եւ այս Աթոռն է որ թափուր է: Կարգն ե՞րբ պիտի գայ անոր:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

Ծ. ԽՄԲ. — Մեր մասին, ա՛յնքան փոյթ չենք ըներ թէ կարգն ե՛րբ պիտի գայ անոր: Ինչպէս արդէն բացատրած ենք, մեզ համար, Աղթամարի Կաթողիկոսութիւնը մեր Եկեղեցւոյն պատմութեան մէջ պարագաներու բերմամբ զարտուղութիւն մ'էր, որ այսօր գործնական նշանակութիւն մը չունի այլ եւս: Եւ ո՛չ մի կերպով կըրնայ բաղդատութեան դրուիլ Կիլիկիոյ Աթոռին հետ: «Կաթողիկոսութիւն» բառէն զատ, հիմա նմանութեան եզր չկայ երկուքին մէջ: Կաթողիկոսութիւն մը պահելու չափ թեմ և ժողովուրդ ալ չկայ հոն, ո՛րքան ալ աշխարհագրական յատուկ անուններ իրարու քով շարած ըլլայ յօդուածագիրը: Գալով Աղթամար կղզիին աքանչելի կեանքին, ջուրն ու օդը չեն որ Կաթողիկոսութիւնը կ'կացուցանեն: Մեր կարծիքով, այն կողմերուն համար առ այժմ պէտք եղածն է շնորհքով Առաջնորդ մը Վանայ մէջ, կարող, ճարպիկ, ազդեցիկ, և ո՛չ թէ հիմակուանին նման թոյլ և տկար տեղապահ մը:

ՕՐՈՒԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԶԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՆՊԱՍՏԻ ՀԱՆԴԷՍԸ. — ԳԹՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԸ. — ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ. — ՕՐՈՒԱՆ ՄԱՐԴԸ.

Կարդացի՞ք թէ պատրաստութիւններ կ'ըլլան Ազգ. Հիւանդանոցի տարեկան նպաստին համար: Նուագահանդէ՞ս թէ պարահանդէս, տակաւին որոշուած չէ: Բայց վստահ կրնանք ըլլալ նիւթական յաջողութեանն համար: Պոլսեցւոց մեծամասնութիւնը, Էսնաֆ դասակարգը, սիրով պիտի նպաստէ Ազգին Տան, երբ Հայ Լոյֆը չխնայէ իր բարոյական և նիւթական աջակցութիւնը, այնպէս որ հանդիսին մէկ ժամ մնացած՝ ... ո՛չ մէկ տոմսակ պիտի կրնանք գտնել: Ոմանք, փորձառու մարդիկ, նուագահանդէսը կը նախընտրեն, իբր աւելի նպատակայարմար և հրահանգող. երիտասարդներ, ընտանեաց հայրեր ալ կան, որ միեւնոյն կարծիքն ունին, արեւմտեան երաժշտութեան ալ ... կտորներէն բան մը հասկնալու փափաքով, կամ թերեւս իբր բողոք տիրացուի մը յայտարարութեան թէ մեր ժողովուրդը զուրկ է արեւմտեան երաժշտութիւնը հասկնալու կարողութենէն: Մոռցայ Գատըգիւղի կինները, որոնց երաժշտութեան ճաշակն այնքան յառաջ գացեր է, որ երաժշտական ...մը կազմակերպեր են իրենց մէջ, կիներ՝ ամենքն ալ իրենց կարգին զարգացած եւրոպական դաստիարակութեամբ, և գրականութեան, գեղարուեստի և երաժշտութեան հետամուտ. ասոնք դաշնակ կամ ջութակ ածեր են, երգեր, խօսեր և վերջապէս աղուոր ժամանց մը անցուցեր են: Աս ամենքը աղէկ, սակայն արդեօք, այդ վերապացիկ և գջայնիկ մթնոլորտին մէջ, ուր մինչեւ երկնից բնագաւառներն ելեր են, իրենց յարգելի Տեղեկաբերին բառերով, յիշող եղե՞ր է իրենց մէջ երկինքէն շատ մօտ, Երզրումի քոյրերն և աղբրդիքը, ջանացե՞ր են քանի մը ղրշ. մէկդի դնել, գոնէ աւելցուկը այն դրամին, զոր կը մսխեն փեսաւրներու, ժանեակի, քօուէյի կամ չպարի համար: Կամ պիտի բարեհաճէի՞ն գործօն դեր մը ստանձնել Հիւանդանոցի հանդէսին համար: Ան ատեն Տիկին Զարուհին աւելի հպարտ և արդարացի հիացումով պիտի լեցնէր իր Կանանց Բաժինը: Իբր օրինակ կարելի՞ է ցուցնել արդեօք մեր կիներու, դպրոցական մեր տղաքը, որ, աղ իրենց պզտիկ հասակնուն մէջ, իրենց հայրիկներէն խլած տասը քսան փարան կ'յատկացնեն աղքատ երկրաշարժէն վնասուող, ծիներու վրայ պառկող եղող իրենց աղբարիկներուն, և իրենց մատղաշ հասակներէն կ'պատրաստուին ըլլալ բարեսիրտ անհատներ և թերեւս ապագայ բարերարներ:

* * Մարդ մը որ իր Ազգին բարեգործութիւն մը կ'ընէ բարոյական պարտք մը կատարած կ'ըլլայ: Այդ պարտքի ճանաչումը շատ քիչեր ունին մեր մէջ դժբախտաբար, բարերարներ խիստ ցանցառ են և հազուագիւտ: Սակայն յանկարծակի չեկա՞ք, և անհաւատալի չթուեցա՞ւ ձեզ, երբ կարդացիք, թերթիս Ազգային բաժնին մէջ, թէ Պարսիկ մը, բարեգործութիւնը շատ աւելի լայնօրէն և մարդասիրաբար ըմբռնելով, կ'չինէ Կովկասի իր Հայ համշիրակներու եկեղեցի մը, կ'մեռնի աս բարի Պարսիկն և իր եղբայրն ոչ միայն կ'ընդունի աս նուէրը, այլ իր կողմէն ալ բան մը կ'աւելցնէ:

Աս պատմութիւնը հէքեաթ մը կարծելու իրաւունք ունիք, իմ ալ հաւատալս չեկաւ, մինչեւ որ ստուգեցի: Արդեօք աս վեհանձն Պարսիկն և իր ազնիւ եղբայրն իմացա՞ն անցեալներս, ասոր ճիշդ հակառակ, ի Պոլիս հարուստի մը ըրած կտակն որ միեւնոյն...գործադրութիւնն ունեցաւ, և արդեօք դա՞ս մը տալու համար էր մեր Պոլսեցի բարեխիղճ կտակակատարին, այդ պարագան չեմ ստուգած: Ինչ որ ինձ անհուն ուրախութիւն պատճառեց, աս էր թէ Մանչեսդրի Հայ վաճառականին 20,000 ոսկիի նուէրին հերքումը նոր կարդացած էի, երբ բարեսէր Պարսիկին բարեգործութիւնն իմացայ: Բայց ուրկէ՞ ելաւ 20,000 ոսկիի նուէրի խօսքը: Անցեալներս թերթ մը, ի ձայն փողոյ աւետեց թէ Մանչեսդրի Հայ վաճառական մը, 20,000 ոսկիով պիտի հիմնէ Առեւտրական վարժարան մը: Անունն ամէնուս ծանօթ պատուաւոր և կրթասէր վաճառական մ'էր. Թերթեր արտատպեցին աս լուրը: Աղ օրէն ամէնուն երախտիքին, յարգանքին և ակնածանքին առարկայ եղաւ աղ անունը: Բայց զարմանալին ան է թէ մարդն աղ տեսակ բան մը մտքէ չէ անցուցեր, գոնէ առ այժմ, 20,000ն ալ ո՞ւրկէց գտեր են: Հերքումն անշուշտ բան մը բնաւ չընելու համար չէ: Ակնարկուած վաճառականը կրնայ և կարող է 20-30,000 և թերեւս աւելի նուիրել, որովհետեւ, ունի թէ՛ հարստութիւն, թէ զարգացում և թէ կրթասիրութիւն, և ան անունը զոր պիտի ձգէ իր ետին, ան երախտագիտութիւնը, որու առարկայ պիտի ըլլայ, արդիւնաւոր տոկոսները պիտի ըլլան իր նուիրած գումարին: Մեր հարուստներն երբ շատ անգամ չունին բարերարելու տրամադրութիւնը, միշտ կայ իրենց մօտ բարեպաշտական զգացում մը, որ կ'կայանայ խունկի մոմի պէտք եղած դրամը տալու, եկեղեցական յարգանք, և ինչ որ նոր է՝ եպիսկոպոսներու գերյարգանքի մէջ: Ամէնուն համար փառասիրութիւն մ'է երբ եպիսկոպոս մը Թաղէ, պսակէ կամ կնքէ իրենց ընտանեաց մէկ անդամը: Ջենք կրնար դպչիլ սա բարի և անվնաս զգացումներուն, երբ հարուստին կատարեալ համարումը վայելող աս բարձրաստիճան կղերը պահէր միշտ իր ... և իր դերը չստորնացնէր քանի մը ոսկիի համար, իր դամբանականներու կամ հարսանեաց քարոզներու մէջ շողոմարար և նուաստացուցիչ պարբերութիւններով:

* * Հարուստներու սիրած և գերընտրած եպիսկոպոսը, որ Էսնաֆին և յետին աղքատին ալ յարգածն է, ընտրուեցաւ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ: Ցաջող ընտրութիւն մը, որ նմանը շատ քիչ անգամ տեսնուած համակրութեամբ ողջունուեցաւ ամէն թերթերէ, առանց բացառութեան, և ընդհանուր ժողովուրդէն. և ինչպէս որ կ'ըսէր Ս. Պատրիարք Հայրը, որ ... սեղանակը կ'գտնուէր, երբ շնորհաւորութեան գացած էի իրեն, չեղաւ ո և է անհատ որ տարբեր կարծիք մը կամ բողոք մ'ունենայ հանրայինին դէմ: Տ. Գէորգ Սրբազան իր անբասիր անցեալովը, լուրջ և սիրաշահող բնաւորութեամբը, անտարակոյս պիտի արդարացնէ ամէն յոյս, զոր կ'ստածենք իրեն վրայ: Այն տխուր դէմքը, որ տեսայ իր վրայ առաջին տպաւորութեան տակ սակայն, իր պաշտօնին բարձրութիւնն և անոր դրած պարտականութիւններն ըմբռնող մարդու մը արտայայտութիւնն էր միայն: Ինք իբր զարգացած և հաշուագէտ մարդ, պիտի ջանայ նիւթապէս ալ բարեկարգել իր ընդարձակ Վիճակը, իրեն աշխատակից ունենալով Կիլիկեցիք, որ այժմէն սրտանց կ'սիրեն իրենց Հովիւը, և անշուշտ միջոց չպիտի պակսի տանց, գործնականապէս օգտակար ըլլալու իրենց հաւաքական գործունէութեան մէջ:

Ե. ՊԷՅԱՋԵԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆԱՑ ԿՐԱԾ ԶՐԿԱՆՔԸ

Անխառն միտում մը ունինք միայն և միայն ուսուցիչներուն կրած զրկանքին վրայ գրելու, երբ կրթական հարցին շուրջը դառնան մեր դիտողութիւններ: Սակայն, անոնցմէ ոմանց չարաշահութեան եւ զրկանքին ենթարկուող աշակերտներուն կացութեան վրայ ալ ինչո՞ւ չենք խօսիր բնաւ: Պոլսոյ Ազգ. վարժարաններուն մեծամասնութեան մէջ, ... կ'ընեն մեր ուսուցիչներ: Այս կամ այն հրատարակչին կամ հեղինակին հետ կնքուած պայմանագրի մը համաձայն, ... գիրք և դպրոցական տետրակ կ'ծախեն ուսանողին, և կամ՝ տետրակի տպել ծածկոյթ, վերջապէս բան մը կ'ծախեն, բան մը կ'հնարեն՝ աշակերտէն ու աշակերտուհիէն փարա քաշելու համար: Եւ վա՜յ է եկեր այն ուսանողին գլխուն, որ դպրոցին մէջ վաճառուած դասագիրքը դուրսէն գներ է, կամ գնելով՝ չէ կրցած անոր դրամը վճարել, և կամ թէ կարողութիւն չունի դպրոցէն գնելու: Բուն իսկ այս պարագաներու բերմամբ, կը գտնուին ուսուցիչներ որք ուսանողին հանդէպ ողորմելի արարքներու դուռ կ'բանան, որք անխիղճ վրիժառութենէ մը չեն տարբերիր բնաւ: Անցեալ օր, Ղալաթիոյ Կեդր. Նախակրթարանին մէկ ուսուցիչը քիչ շատ չափահաս աշակերտի մը հայերէնի դասին՝ զէրօ (0) նիշը տուած էր, որովհետեւ տղան դասագիրքը տունը մոռցած էր: Խեղճ աշակերտին՝ դասը լաւ պատրաստած ըլլալն ալ օգուտ չէ ունեցեր, զի ժամանակին դասագիրքը վարժարանէն առած չըլլալու աններելի յանցանքը գործած էր միամիտ պարոնը: (*)

Դարձեալ, նոյն վարժարանին մէջ, առաւօտեան որոշեալ ժամէն 5—10 վայրկեան ուշ մնացող աշակերտը նոյն օրը լրիւ կ'ճամբուէր վարժարանէն, ինչպէս ժամանակին դիտողութիւն ըրաւ Բ...: Աշակերտաց ծնողք բողոքեցին վարժարանին Խնամակալութեան, որ Տնօրէնին անյօժարութեան չանսալով, հազիւ կրցաւ յետս կոչել նոյն որոշումը:

Հիմակ որոշեալ ժամուն ուշացող ուսանողն անպատճառ կ'զրկուի Ա. ժամուն դասէն: Եւ երբ մտածենք վայրկեան մը թէ ձմրան այս եղանակին, շոգենաւով, ի հարկին նաւակով, կամ հեռաւոր ճամբորդող հեռաւոր Թաղերէ, արուարձաններէ աշակերտներ նոյն

(*). — Այս առթիւ, զրկուած աշակերտին հայրը նոյն վարժարանին Տնօրէնութեան նամակով մը բողոքած է թէեւ, բայց իբր պատասխան՝ յանդիմանական սաստով մը նոյն աշակերտին կ'ազդարարուի խստիւ, որ անգամ մ'ալ հայրը դպրոցին գործերուն չխառնուի. Հակառակ պարագային՝ դպրոցէն պիտի արտաքսուի: Հայրերն ո՞վ կ'ըլլան կոր որ դպրոցին գործերուն կ'խառնուին կոր, հէ՞: Վ. Մ.

ԶԵՆՈԲԻԱ

ՏԻԿԻՆ ՀԱՆՐԻ ԿՐԷՎԻԼ (40)

ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹՕՆ "ԲԻՒԶԱՆԴԻՈՆ,,Ի
ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐՈՒ, ԵՐԱԺԻՇՏՆԵՐՈՒ, ԴԵՐԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷ ԱՌՆՈՒԱԾ

ԺԷ.

Տիկին Դարակօն իր մեծարանքները մատոյց, սովորականին պէս: Ճաշի ատեն ոգեւորութիւն չկար,— անդրանիկ զաւկին բացակայութեա՞ն պատճառաւ թէ երկու ամուսիններուն իրարու հանդէպ ցոյց տուած բռնազբօսիկ վարմունքին համար, որ յայտնի կ'ըլլար և յուսացուած հրապոյրին մեծագոյն մասը կ'քառնար այս հանդէսէն: Ընտանիքի մը և անոր անկեղծ բարեկամներուն համար շատ հեշտալի բան է արծաթեայ ամուսնութեան տօնախմբումը: Ոսկեայ ամուսնութիւնք, առաւել պատկառելի, առաւել հազուադէպ, յաճախ բազմաթիւ զաւակներ կ'համախմբեն իրենց շուրջը, բայց երբեմն բարեկամներու մէջ հազիւ մէկ հոգի կ'գտնուի որ յիսուն տարի առաջ հարսին դէմքը յուսավառող ժպիտն յիշէ: Արծաթեայ ամուսնութիւնք, ընդհակառակն, կըրնան հաւաքել—կ'բաւէ որ բախտը նպաստաւորէ—, առաջին օրուան հրաւիրեալներուն մեծ մասը, և ի՛նչ ուրախութիւն ազգականներու և բարեկամներու համար, երբ կ'տեսնեն ընտանիքին մայրը գրեթէ նո՛յնքան երիտասարդ, երբեմն աւելի գեղեցիկ, իր զաւակներուն անդրանիկ քրոջը պէս, որ կ'յիշեցնէ հարսանեկան քօղին տակ ունեցած քիչ մը ձախլիկ շնորհալիութիւնը: Ահա ասիկա յուսացած էին անոնք որ կ'սիրէին Դարակօն ամուսինները, այսինքն կանի ամէնէն նշանաւոր դէմքերը: Ուզած էին հրճուիլ այս օրուան մէջ, որ յաղթանակի օր մ'էր Տիկին Բլօտիայի համար, հազիւ իր ամրան վախճանին հասած աղուոր պտուղի շքեղութեամբ վառ ի վառ: Բայց Ժօզէ ալ իր բաժինն ունէր այս հրճուանքին առնելու գործին մէջ: Միթէ այս ընտանիքին գեղեցիկ ու ազնիւ սէրն աւանդական չէ՞ր: Ամէն տեղ, փիլէժէնկ երկրին մէկ ծայրէն միւսը, երբ օրինակ կ'յիշուէին Դարակօնները: Եւ սակայն ամուսինն այսօր շատ պաղ, շատ ցուրտ կ'երեւէր: Իր անունն անդադար իր կնոջ անունին միացնող խանդավառ բաժակաճառերուն կ'պատասխանէր քաղաքավարութեամբ, բայց առանց յուզումի: Տիկին Բլօտիա ինքզինք գտած էր: Այտերը քիչ մ'աւելի կարմրած, կ'ժպտէր ամէնուն, կը հսկէր ամէն բանի վրայ, և միջոց կը գտնէր դիտելու իր զաւակաց շարժումները, որք անհաւակութիւն ընելու կը փորձուէին: «—Ի՛նչ կին, կ'ըսէր ինքնիրեն Ժան Պօքէրդ: Վստա՛հ եմ որ բացակայ զաւկին վրայ միայն կ'խորհի:»

Օգուտ քաղելով իր հրաւիրեալներուն վրայ Տիկին Բլօտիայի պտտցուցած ակնարկէն, երգէոնահարը գաւաթը վերցուց գաղտնապէս և ըսաւ.— Ջեր զաւկին կենա՛ցը:

Բլօտիա շնորհակալ եղաւ գլխովը, բայց, միեւնոյն ատեն, այդ աղուոր ակնարկը դարձաւ դէպ ի Ժօզէ, ա՛յնքան վշտագին ու բուռն խանդաղատանքով մը որ Ժան Պօքէրդ մինչեւ հոգիին խորն յուզուեցաւ: Սիրուն աչքերը նորէն իր կողմը դարձան, զսպուած արցունքներով ողողուն, և յետոյ խոնարհեցան, վասն զի Բլօտիա չէր ուզեր լալ սեղանին վրայ, իրենց արծաթեայ ամուսնութեան տօնախմբումին օրը: Պօքէրդ զայրոյթի մը ցնցումն զգաց: Ժօզէ իր կինը վշտացուցած էր այդ օրը: Ցայտնի էր աս: Աստուծուն օրն հատաւ ու միայն այս օ՞րը մնաց, ա՛յս օրը, երբ պարտաւոր էր առտուն իսկ ծունկի գալ կնոջն առջեւ, շնորհակալ ըլլալ և օրհնել զայն՝ ամբողջ քսան և հինգ տարի իր կեանքն հեշտալի ու մեծարելի կացուցած ըլլալուն համար: Ժօզէ ոտք ելաւ և պատասխանեց իրեն ուղղուած բաժակաճառի մը: Իրմէ սպասուած խօսքերն ըսաւ, և միեւնոյն ատեն շնորհակալ եղաւ «իր զաւակներուն մօր, իր հաւատարիմ ու անձնուէր ընկերուհիին» համար: Շատ աղուոր խօսեցաւ: Ամենքն ալ ծափահարեցին, և յետոյ կարճ լռութիւն մը տիրեց,— պաղ վայրկեան մը: Ժամացոյցը 6 զարկաւ: Ժան Պօքէրդ այս տարօրինակ սառն լռութիւնը խըզեց կատակախօսութիւնով մը որ բոլոր ներկաները խնդացուց: Մասնաւոր խօսակցութիւններն ոգեւորուեցան վերջին համադամներուն շուրջը: Սալօն պիտի երթային, երբ ծառայ մը Ժօզէի մօտեցաւ ու պզտիկ ափսէի վրայ հեռագիր մը բերելով....: —Նորէն շնորհաւորութիւններ, ըսաւ մէկը ծափելով:

Ժօզէ բացաւ հեռագիրը, որ թերեւս քսաներորդն էր մէկ օրուան մէջ: Կարդաց և տժգունեցաւ: Ամէն մարդ անոր երեսը կ'նայէր: Դարակօն աչքերը վերցուց և տեսաւ որ զինքը սիրող բոլոր մարդոց դէմքերն իրեն դարձած էին անձկալից: —Մէկը հիւանդ է, ըսաւ: Զար լուր մը: Ներսում կ'խնդրեմ:

Գրգիռն աւելի զօրաւոր եղաւ քան իր կամքը, քան իր կիրթ սովորութիւններն որք սակայն ա՞յնչափ հզօր էին: Ոտք ելաւ: Տիկին Բլօտիա, որ աչքերովը կ'ափսէր զայն, աւելի շուտ ոտք ելաւ: Տակաւին Դարակօն իր աթոռն ետ չէր, Բլօտիա ոտքի վրայ էր և խնդրած էր քովը նստող սեղանակցէն որ թեւն իրեն տայ: Ամէնքը միատեղ դարձան սալօն, որ միշտ լոյսերու մէջ կ'շողար, բայց ցուրտ էր, մանաւանդ տաք ճաշասրահին հետ բաղդատելով: Հրաւիրեալները շրջապատեցին Դարակօնը, և հարցումներ տեղացուցին: Այս պակեայ տունը, ուր ծածուկ բան չկար երբեք, ա՛լ չէր այն տուներէն ուր մարդ կրնար անգաղտնապահ ըլլալ: Ժօզէ խուսափողական պատասխաններ տուաւ ամէնուն: Այն ատեն մօտեցաւ Բլօտիա, իր պարզութեանը մէջ ա՛յնքան մեծ ու յարգելի որ ամէն մարդ մէկզի քաշուեցաւ, ճամբայ տալու համար: —Դէ՞շ լուր է, Ժօզէ՛, ըսաւ ցած ձայնով: Ցուսամ թէ Լուսպէնէն չէ:

—Լուսպէ՞ն, կրկնեց Դարակօն զարմանքով: Ոչ, Լուսպէնէն չէ:

Ուզեց անդին դառնալ, բայց Բլօտիա ձեռքն անոր թեւին վրայ դրաւ յուշիկ: —Կ'երդնո՞ւս, ըսաւ:

—Կ'երդնո՛ւմ, պատասխանեց Ժօզէ, ուսերը թօթուելով:

—Հեռագիրը ցոյց կուտա՞ս:

—Ո՛չ, ըսաւ Դպրապետը չոր ձայնով և հեռացաւ:

Ելիզա խանդէ կ'հրամցնէր հիւրերուն իր քրոջը՝ Լիլիի հետ, որ մեծցած էր, և այդ օր Հէպէի, գինի մատռուակող դիցուհիին կարգն անցաւ: Այս երկու աղջիկներն ամէնուն ուշադրութիւնը գրաւեցին և հեռագրին մեկնութիւններ տալու ժամանակ չթողուցին: Տիկին Բլօտիա յանկարծ իր հիւրերէն մէկուն դարձաւ և անոր խօսեցաւ առանց գիտնալու թէ ինչ էր ըսածը: Սրտնեղութիւն մը գրաւեց հիւրերը: Ժօզէ անյայտ եղած էր:

(Շար.) Թարգմ. Ժ. ՇԻՐԱԿԱՑԻ

վարժարանը կ'յաճախեն, որոցմէ ոմանք 1—1½ ժամ ճամբայ ունին կտրելիք առաւօտ իրիկուն, արդարացի՞ է այս տնօրինութիւն անո՛նց համար։ Այսօր կամուրջը բաց կ'ըլլայ, վաղը շոգենաւն ուշ կ'մնայ, պատճառներ կ'պակսի՞ն արդեօք։ Ո՞վ կ'ըսէ որ անպատիժ մնան ուշ մնացող աշակերտները. կէս օրին զբօսանքէ, կամ մեկնման պահուն ժամ մը արգիլելով պարտազանց աշակերտը, կարելի չէ՞ միթէ վերջ տալ այսչափ խիստ տնօրինութեան մը, որ ուսանողին իմացական զարգացման կ'սպառնայ և անոր մէկ ժամը կ'սպաննէ անխղճօրէն, ինչպէս առաջ ամբողջ օրը կ'սպաննէր, չենք գիտեր յանուն ո՛ր Մանկավարժութեան։ Նպատակնիս միայն Ղալաթիոյ դպրոցին վրայ խօսիլ չէ։ Մեր վարժարաններն ընդհանրապէս ուսանողին կարգ մը զրկանքներ պատճառելու սովորած են արդէն։ Ցաճախ երկու ամիսն անգամ մը, ի շնորհս այս կամ այն ուսուցչին, կամ անոր կողմէ եղած յանձնարարութեան, քանի քանի դասագիրքեր կը փոխուին աշակերտներու մէջ, առանց սակայն անոնց կողմէ գրքին քանի մը տասնեակ էջն իսկ թղթատուած ըլլալու։ Մեր ուսուցիչներէն ոմանք ալ թաղական աղային կամ հարուստին տղան սիրաշահելու բացայայտ եռանդ ունին։ Նե այդ չփացած տղոց պատճառաւ աղքատի տղաք ո՛րքան կ'տառապին, ծաղրանքի անխիղճ ձեռներուն տակ։ Ուսումն. Խորհուրդը՝ փոխանակ իր իւրաքանչիւր նստին նորանոր դասագիրքերու հրատարակութիւնը վաւերացնելու՝ ինչո՞ւ ժամ առաջ չի փութար գէթ Պոլսոյ բոլոր Ազգ. վարժարաններուն մէջ գործածելի դասագիրքերուն ընդհանուր ցուցակն որոշել, եւ միայն անոնց գործածութիւնն յանձնարարել, վերջ տալու համար դասագրքի անվերջ փոփոխումներուն, որք վարժապետական չափազանցութեան ակներև մէկ ձեւն են լոկ, և ո՛չ թէ կրթական բարւոքում։

ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ

ՔԻԼԻ ԵՒ ԱՐԺԱՆԴԻՆ.—Թէև հեռագիրները ծանուցին թէ Քիլի և Արժանդին Անգլիոյ իրաւարութեան դիմում ըրած ըլլալով, պատերազմի անմիջական երկիւղը փարատած է, բայց պատերազմական ձգտումները և պատրաստութիւնք կ'շարունակուին երկուստեք փութոյ պնդութեամբ։ Քիլիի և Արժանդինի կռուելու կարողութիւնը կ'ցուցնէ հետեւեալ համառօտ պատկերն իրենց ծովեզերեայ և ծովային պաշտպանութեան. Քիլի ունի ամբողջ զրահ ըլլալով չորս մարտանաւ, «Ալմիրանդէ Քօքրան» 1874ին շինուած, 3500 թոնօ տարողութեամբ, 13 ծովային մղոն արագութեամբ. «Ալմիրանդէ Օ'Հիկինս», 1897ին շինուած, 3500 թոնօ տարողութեամբ, 21 մղոն արագութեամբ. «Քաբիդան Բրադ» 1890ին շինուած, 6900 թոնօ տարողութեամբ, 18 ծովային մղոն արագութեամբ, «Էսմէրալտա» 1896ին շինուած, 7020 թոնօ տարողութեամբ, 22 մղոն արագութեամբ։ Ունի նաև չորս մարտանաւ՝ կէս զրահ ըլլալով, և ընդ ամէնն 121 հազար 600 թոնօ տարողութեամբ, և երեք թնդանօթանաւ։ Արժանդին ունի 7 մարտանաւ՝ ամբողջ զրահ, 3 մարտանաւ՝ կէս զրահ, և երկու եզերապահ մարտանաւ։

ՏԱԳՆԱՊՆ Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ.—Մ. Քարավելով կառավարութեան կողմէ հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ Սօպրանիէի մէջ.—«Ամսոյս 3ին ի դիմաց կառավարութեան ըրած յայտարարութեանս վերջ, նախարարութիւնն հրաժարական տուաւ Ն. Արք. Բարձրութեան Ֆէրտինանտ իշխանին, խորհուրդ տալով անոր դիմել ուրիշ քաղաքական անձնաւորութեանց որք կարենան ճամբայ մը ցոյց տալ Պուլկարիան ազատելու իր ելմտական դժուարութիւններէն առանց փոխառութեան եւ առանց ծխախոտը Ռէժի ընելու։ Իշխանը դիմեց մէկ քանի անձնաւորութեանց, բայց ասոնք չկրնալով ուրիշ ճամբայ մը ցուցնել, չընդունեց Դանեւի հրաժարականը, և դարձեալ պաշտօն յանձնեց նոյն դահլճին երկիրը վարել։ Համոզուած ըլլալով թէ արդի դժուարին կացութենէն ելնելու միակ միջոցն է փոխառութիւնը քուէարկել, կառավարութիւնը պատրաստ է դարձեալ վերստանձնել վարչութիւնը։» Մ. Թէոդորով փոխառութեան դէմ երկար ճառ մը խօսեցաւ, ինչպէս նաև Մ. Կեշով։ Այս վերջինն յայտարարեց թէ ինք Ֆէրտինանտ իշխանին ուրիշ ճամբայ մը ցոյց տուած է, և թէ Քարավելովի յայտարարութիւնք իրողութեան հակառակ են։ Ինչպէս հեռագիրը ծանոյց, Քարավելով այս անգամ ալ չյաջողեցաւ քուէարկել տալ փոխառութիւնը, և հրաժարեցաւ։

ՏԷՎԷԴԻ ԿԸ ԿՌՈՒԻ ԴԱՐՁԵԱԼ.—Անգլ. զօրավար Տարդնէլ գունդ մը Կայսերական թեթեւազէն ձիաւորներով յարձակեցաւ Տէվէդի վրայ, որ ունէր 800 հոգի և երկու թնդանօթ, Լանկպէրկի մօտ։ Կռիւը չորս ժամ տեւեց, Պօէրք քաշուեցան, երբ տեսան որ զօրավար Բէմպէլ Պէթէլհէմէն օգնութեան կ'հասնի Տարդնէլի։ Պօէրք դարձեալ կ'մտածեն եղեր Նադալ արշաւել Տրաքէն լեռներէն, Տէվէդի և Պօթայի հրամանին ներքև։ Բարեյոյս արշաւելու ծրագիր մ'ալ ունին եղեր։ Փոխնախագահ Շալք Պուրկէր և Թրանսվալի նախորդ արտաքին գործոց նախարար Մ. Ռէյց Թրանսվալեան կառավարութեան բոլոր տոմարներուն հետ մէկտեղ այս պահուս կ'գտնուին Ռուս—Սէնեքալի շրջակայքը, Միտըլպուրկի հիւսիսային կողմը։ Զօր. Պօթա Էրմէլոյի հարաւ—արեւելեան կողմը կը գտնուի 800 հոգիով։ Ստոյգ է որ այս պահուս պօէրական մեծ համախմբում մը տեղի կ'ունենայ։

ՊՕԷՐԱԿԱՆ ԱՆԳԹՈՒԹԻՒՆՔ.—Պատերազմական Պաշտօնատունը լրագրաց հաղորդեց Լորտ Քիչնէրի քանի մը հեռագիրները, որք կ'պատմեն թէ Պօէրք անգթօրէն սպաննած են 37 բնիկներ Քիմպըլիի մօտերը, և 23 ալ Օրանժի մէջ։ Պօէրք տաշտի մը մէջ դրեր են Անգլիացւոց ծառայութեան մէջ գտնուող բնիկ կառապան մը, յետոյ վարսակի իւղոտած պարկեր դնելով անոր վրայ, բռնկցուցեր են։

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ.—Ֆրանքօ-իտալական մերձեցման վրայ օտար երկիրներու մամլոյն խորհրդածութիւնք դեռ վերջ գտած չեն։ Իտալիոյ եւ Ֆրանսայի մէջ գոհունակութեամբ ողջունուած է այս նոր բարեկամութիւնը, որ Եւրոպայի խաղաղութեան երաշխիքներէն մին է, բայց գերման և աւստրիական մամուլը կա՛մ բոլորովին լուռ կ'մնայ, և կամ այդ խնդրոյն վրայ խօսած ատեն, Իտալիոյ համար աննպաստ կ'համարի զայն։ «Նայէ Ֆրայէ Բրէսէ» կ'ըսէ թէ Իտալիա շատ աղէկ չըներ Ֆրանսայի մօտենալով այդքան։ Պապին աշխարհական իշխանութեան ակնարկելով, կ'ըսէ թէ Ֆրանսացիք միշտ այն գաղափարն ունին որ Հռոմ պէտք է Պապինն ըլլայ։ «Եթէ ճիզուիտ--կղերական մեծամասնութիւն մը Մ. Մելինի կամ Մ. Տիւբիւիի վարչութեան ներքև պաշտօնի գլուխ անցնի, Հռոմի խնդիրը կրնայ ծանր կերպարանք մը առնել։» Իտալացիք աւստրիացի այդ թերթէն նուազ միամիտ են և այդպիսի սպառնալիքէ չեն վախնար, կ'ըսէ Տէյա։ Բոբէֆ-իտալական թերթը կ'ըսէ.—«Զարմանալի է որ Աւստրիա և Գերմանիա կրնան իրենց գործերը կարգադրել իրենց շահուց համաձայն կերպով, և Իտալիա միայն պարտաւոր է այդ երկուքին շահուց քաղաքականութեան մը հետեւիլ։ Այսօր որովհետև Իտալիա կ'դադրի ուրիշներուն ծառայելէ, և իր սեփական շահը միայն կ'ուզէ նկատի առնել, այդ ուրիշներն ա՛յսքան յուսախաբ և ա՛յսքան դժգոհ կ'ըլլան հիմա։» Իտալացիք առ հասարակ գոհ են որ իրենց և Ֆրանսայի միջեւ քար գայթակղութեան եղած գաղթային խնդիրք վերջացեր են այլ եւս։

ԲԱՆԱՄԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ տարեկան ընդհանուր ժողովին մէջ շահեկան և եռանդուն վիճաբանութիւններ տեղի ունեցան։ Տեղեկագիրը կ'ցուցնէ թէ նոր ընկերութեան կողմէ գործողութեան ձեռնարկուելէն ի վեր 5 միլիոն 850,000 խորանարդ մէտր աշխատութիւն կատարուած է ջրանցքին շինութեան համար։ 2000 գործաւորներուն մէջ 50 մահ միայն պատահած է։ Տեղեկագիրը Միացեալ Նահանգաց հետ բանակցութեանց վրայ խօսելով, յայտարարեց թէ ամերիկեան յանձնաժողովն ի նպաստ Նիքարակուայի ճամբուն որոշում տուած է, առարկելով թէ Բանամայի ընկերութեան կողմէ պահանջուած գինը չափազանց է։ Բաժնետէրերէն ոմանք առաջարկեցին գինը զեղչել, և խնդրել Ուաշինկդընի ֆրանսական դեսպանէն որ բանակցութեանց ոյժ տայ, ուրիշներ պահանջեցին որ ֆրանսական ընկերութիւնն ի՛նք շարունակէ ջրանցքին շինութիւնը։ Ընկերութեան նախագահ Մ. Հիւդէն և շինութեան հսկող Մ. Շորոն հրաժարեցան, որովհետև խիստ դիտողութիւններ եղան անոնց դէմ թէ բանակցութիւնները պէտք եղածին պէս չեն կատարած Միացեալ Նահանգաց հետ։ Ի վերջոյ աղմուկը դադրեցաւ, տեղեկագիրն ընդունուեցաւ, և վարչական խորհրդոյ հրաժարեալ կամ մեռեալ անդամներուն տեղ նոր ընտրութիւններ կատարուեցան։

—Միացեալ Նահանգաց մէջ եւ կարծիքի հոսանք մը կայ ի նպաստ Բանամայի, որուն համար նոր բանակցութիւններ ալ պիտի կատարուին։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆՈՐ ԵԼՄՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ.—Մէկ-երկու շաբաթէն պիտի հրաժարի Մր. Կէյճ։ Նախագահ Րուզվէլդ ելմտական նախարարի պաշտօնն առաջարկեց Մասաչուսէցի նահանգապետ Մր. Քրէյնի, որ ժամանակ ուզեց մտածելու և վերջնական պատասխանը տալու քանի մը օրէն։

ՌՈՒՍԱՔ Ի ՄԱՆՃՈՒՐԻԱ.— Մանչուրիայէ առնուած լուրերն այդ երկրին անհաստատ և խռովեալ կացութիւնը կ'յայտնեն։ Աւազակութիւններ, աւարառութիւններ անպակաս են։ Ցետ քննութեան հասկցուեր է որ Խազախ զինուորներն հանդարտ բնակիչներուն վրայ կ'յարձակին գողութեան նպատակաւ, ազնուական Մոնկոլներու ոչխարներն և ուրիշ հարստութիւնները կ'յափշտակեն, և ուրիշ անկարգութիւններ ալ կ'ընեն։ Բեքինի մէջ խորհրդակցութիւնք կ'շարունակուին ռուս դեսպան Լէսարի և Չինացի լիազօրներուն միջև։ Ասոնք կ'պահանջեն որ Մանչուրիոյ պայմանագրութեան մէջ կարեւոր փոփոխութիւններ ըլլան։ Կ'առաջարկեն որ ռուս զօրաց քաշուելուն համար աւելի որոշ պայմանաժամ մը ճշտուի, Չինաստան չարգիլուի ուզածին չափ զօրք պահելու Մանչուրիոյ մէջ։ Լիազօրները կ'հակառակին նաև հանքային մենաշնորհներն ապագային միմիայն Ռուսիոյ տալու պայմանին։ Հարաւային փոխարքայք, որոց ոյժ կուտան յայտնապէս Ճաբոն և Անգլիա, երկար հեռագրեր ուղղելով Չինկ իշխանին, կ'յորդորեն որ Մանչուրիոյ վրայ Չինաստանի վեհապետական իրաւունքները պահպանուին։ Վերջապէս Մանչուրիոյ խնդիրը դարձեալ մէջտեղ կ'ելնէ, և Ճաբոն կ'սպառնայ չինական հող մը գրաւել, եթէ Ռուսիա Մանչուրիոյ տիրէ բացարձակապէս։

ՊՕԷՐ ՄԱՆԿՈՒՆՔ.— Գերմանացի բողոքական մը Մ. Շէֆէր, անցեալ օր Մ. Քրիւկէրի ներկայանալով, 10,000 մարք յանձնեց անոր, իբրև Մնոգեան տօնի նուէր Պօէր տղայոց համար, ի դիմաց Բրուսիոյ և Վեսդֆալիոյ Հոլանտեան գաւառներուն։

ԳՈՐԾԵՐՆ Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌՈՒՍԻԱ.—Քիեվի և Օտեսայի ռուս իշխանութիւնք խիստ միջոցներ ձեռք առած են վերջերս հարաւային Ռուսիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ բնակող Հրէից նկատմամբ։ Խարքովի կառավարիչն յայտարարութիւն մը հրատարակելով, կ'արգիլէ ամէն համախմբում։ Այս հրամանին անսաստողներն առանց դատաստանի իսկոյն 500 ռուբլի տուգանքի պիտի ենթարկուին կամ երեք ամիս պիտի բանտարկուին։

ԳԵՐՄԱՆՔ ԱՒՍՏՐԻԱ ԵՒ Ի ՄԱՃԱՌՍՏԱՆ. —Գերմանացւոց բանեցուցած թատրոններուն և նուագահանդէսներուն դէմ պայքարն երթալով կը սաստկանայ Բէշդայի մէջ։ Քանի մը հարիւր մաճառ ուսանողք դարձեալ գացին քանի մը գերմանական թատրոններ և պարտաւորեցին տէրերը «մաճառացնել» իրենց հաստատութիւնները մինչեւ մէկ ամիս, և այլ եւս գերմանական ներկայացումներ չկազմակերպել անոնց մէջ։

ԼԻ ՀՈՒՆԿ ՉԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻՆ ՄԱՀԸ.— Ամերիկացի Մր. Ուիլըմ Բէթիք, որ երեսուն տարիէ ի վեր Լի Հունկ Չանկի անձնական քարտուղարն և դիւանագիտական խորհրդականն էր, մեռաւ Բեքինի մէջ։ Ասոր խորհրդովն էր որ Լի Հունկ Չանկ իր յառաջդիմասէր ծրագիրներուն մեծ մասը պատրաստեց, և ինքն էր որ խմբագրեց Լի Հունկ Չանկի հռչակաւոր յայտարարութիւնն աֆիոնի դէմ։ Մր. Բէթիք գործ մը կ'թողու, «Լի Հունկ Չանկ և իր ժամանակները,» բայց լմնցուցած չէ։ Այս երկասիրութիւնը Թանկագին յայտնութիւններ կը պարունակէ Չինու վերջին դիւանագիտութեան մասին։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ 25 անգամ ստորագրուեցաւ։ Անհատական դիմումներն այնքան շատ չէին, բայց ֆրանսացի մեծ դրամատէրները գնման մասնակցեցան, և, ինչպէս ուրիշ առիթներու մէջ փորձուած է, մեծ դրամատէրերն ալ վերջը պզտիկ անհատներու կ'ծախեն շահով պարտաթուղթերը։ Բայց ի՛նչ տեսակէտով որ առնուի, գործողութեան յաջողութիւնն անժխտելի է, և անգամ մ'ալ կ'ապացուցանէ թէ խնայողութեան ճաշակն և ոյժը դեռ տկարացած չեն Ֆրանսայի մէջ, սա՛ տարբերութեամբ որ Ֆրանսացիք հաստատուն և առողջ սեղանաւորական գործողութիւններու դրամ կ'պահեցնեն։ Ֆրանսական թերթերն այս առթիւ հարստութեան և դրամագլխի թշնամիներուն դէմ խօսելով, կ'յայտարարեն թէ կուրութիւն է այնպէս մը ներկայացնել թէ դրամագլուխն ազգին տնտեսական կեանքին մէջ վտանգ մ'է. ընդհակառակն, դրամով կարելի է ոյժ տալ ճարտարարուեստին, վաճառականութեան, երկրագործութեան։

—Քաղաքի Փոնսէն 129 միլիոն ֆր. ստորագրեց, Պանք տը Բարի է տէ Բէյի Պա (այն Պանքան որ Պուլկարիոյ փոխառութիւնն պիտի ընէր) 99 միլիոն ֆր., Քօնդուար տ'Էսքոնդ՝ 96 միլիոն, Սօսիէդէ Ժէնէրալ՝ 78 միլիոն, Քաղաքի Լիոնէ՝ 76 միլիոն. Շանպրը Սէնտիքալ տէ զ'Աժան տը Շանժ՝ 76 միլիոն, Ռոչիլտ եղբարք՝ 43 միլիոն, Նէօֆլիզ եղբարք՝ 39 միլիոն, Քաղաքի Էնտիւսդրիէլ՝ 27 միլիոն, Լազառ եղբարք՝ 25 միլիոն, Հայնէ և Ընկ.՝ 23 միլիոն, Վէռն և Ընկ.՝ 15 միլիոն, Հիրշ՝ 12 միլիոն, Քաղաքի Ալժէրիէն՝ 12 միլիոն, Պանք Ֆռանսէզ՝ 11 միլիոն, եւ. եւ.։

ՄԻԼԻՈՆԱՏԷՐՆԵՐԸ.—Երեսփ. Ժողովին մէջ ելմտացոյցի վիճաբանութեան միջոցին փոքրիկ դէպք մը արժանի է ուշադրութեան։ Գործաւորական Մ. Լազի և Մ. Ֆէռէռ առաջարկեցին որ կառավարութիւնը միլիոնատէրներուն վրայ տուրք դնէ անոնց միլիոններուն չափովը։ Անցեալ տարի ալ արդէն Երեսփ. Ժողովն այս մասին առաջարկութիւն մը քուէարկած էր։ Բայց հետեւանք ունեցած չէր։ Ամէն ժամանակ որ ելմտացոյցի վիճաբանութիւն ըլլայ, Երեսփոխանք կ'ուզեն անպատճառ ծուղակ մը լարել միլիոնատէրներուն։ Մ. Լազի և Մ. Ֆէռէռ յաղթանակ տարին 109ի դէմ 357 ձայնով։ Ամէն տեսակ կարծիքի տէր մարդիկ կան քուէարկող մեծամասնութեան մէջ. կան հարուստներ, պահպանողականներ, կղերամիտներ, հարստութիւններն հաւասարապէս բաժնելու դրութեան ջատագով կուսակցութեան հետ խառն։ Բայց մի՛ զարմանաք որ միլիոնատէր երեսփոխաններն ալ իրենց հակառակ քուէ տուին գործաւորական երեսփոխաններուն պէս, անոնք գիտեն թէ անցեալ տարուան նոյն մտօք քուէարկութիւնն ի՛նչ արդիւնք ունեցաւ, բնաւ չխախտեց իրենց պիւտժէն։ Անցեալ տարի Երեսփ. Ժողովին մէջ միլիոնատէրներուն պաշտպանները, այսինքն առաջարկութիւնը չքուէարկողները թուով 43 էին միայն, այս տարի 109 են։ Որովհետեւ հարուստները կը ձեւացնեն հարուստներուն հակառակ քուէ տալ, ասիկա ապացոյց մ'է որ Ֆրանսայի Երեսփ. Ժողովին մէջ անցեալ տարուընէ աւելի աղքատ կայ, Թերեւս աւելի խելացի մարդիկ, որ համոզուած են թէ աւելորդ է երկար բարակ վիճաբանիլ և ջուրին մէջ թուր զարնել, և թէ պէտք է երբեմն ընտրողին հաճոյք պատճառել այնպիսի խնդրոյ մը մէջ, որ բնաւ գործադրելի պիտի չըլլայ։ Անցեալ տարի 43 էին, այս տարի 109 են միլիոնատէրներուն պաշտպանները։ Առեւտրական նախարար Մ. Միլլռան (գործաւորական ըլլալով հանդերձ) կ'վերաբերի այն նուիրական վաշտին որ խոշոր հարստութիւնները կ'պաշտպանէ Լազիի և Ֆէռէռի յանդգնութիւններուն դէմ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆՆ Ի Քիլ վերջապէս յաջողեցաւ ձերբակալել այն խորհրդաւոր մարդը, որ կիներու և պզտիկ աղջիկներու դէմ իր արիւնահեղ ոճրագործութիւններով քանի մը շաբաթէ ի վեր ահուսարսափ կ'տարածէր քաղաքին մէջ։ Այս ահաւոր դիւահարն է բնիկ աւստրիացի բժշկական ուսանող մը, որ իր ըրած գողութիւններուն համար Համալսարանէն վանտուած էր։ Տեսակ մը վիրաբուժական գործիք կ'գործածէր, չորս կողմէն սուր, իր զոհերը զարնելու համար։

—Պերլինի ոստիկանութեան պաշտօնատունն իմացուց քաֆէ–շանդաններու և երաժշտասրահներու տնօրէնութեան թէ Մնոգեան շաբթուն բոլորովին պատշաճ և համեստ ծրագիրներու համեմատ պէտք է ներկայացումներ տալ։ Վրան բաց երգեր, տէքոլդէ տարազներ բացարձակապէս արգիլուած են։ Ոստիկանութիւնն իմացուց նաև Շարլօդէնպուրկի մէկ նկարչին թէ խիստ տուգանքի պիտի դատապարտուի, եթէ շարունակէ իր արհեստանոցին մէջ հաւաքել երիտասարդներ և օրիորդներ բնական վիճակի մէջ պատկերներ գծելու համար։

ՊԱՆՔ ՏԸ ՖՐԱՆՍ նոր պանքնոդներ հրապարակ պիտի հանէ, որոց կեղծը շինելը բացարձակապէս անկարելի պիտի ըլլայ։ Պանքային պաշտօնեաներն այժմէն կ'յայտարարեն թէ աշխարհի ամէնէն վարպետ դրամանենգները պիտի անճրկին, և պիտի պարտաւորուին քանդել իրենց տպագրական մամուլները, և լուսանկարչական գործիքները։ Արդէն հիմակ իսկ շատ դժուար է յաջողութեամբ նմանցնել Պանք տը Ֆռանսի պանքնոդները՝ գործածուած կապոյտ մելանին պատճառաւ, որ կ'արգիլէ անոնց արտապատումը միմիայն լուսանկարչութեան միջոցաւ։ Բայց ճարտար դրամանենգներ վերջերս միջոցը գտած էին գոյնը տպելու թուղթի վրայ՝ զանազան քիմիական և ելեկտրական եղանակներով։ Արդ, նոր պանքնոդներուն համար այս հանճարեղ մէթոտներն ալ անօգուտ պիտի ըլլան։ Նոր պանքնոդներուն թուղթը պիտի ներկուի ոչ թէ մէկ՝ այլ ութ տեսակ տարբեր ներկերով, վերջին ծայր փափկութեամբ և աննշմարելի աստիճանաւորումներով։ Բայց ասոր, այս ութ կապոյտին հետ պիտի խառնուի նաև կարմիր գոյն մը՝ կնճռոտ և մէջէն չելնելիք գիծ մը կազմելով։ Պանքային իշխանութիւնք կ'յայտարարեն թէ ութ կապոյտ ներկերը միայն կ'բաւեն արդէն ի դերև հանելու ամենաճարտար դրամանենգներուն հնարամտութիւնը։ Այս առթիւ պէտք է գիտնալ որ Պանք տը Ֆռանսի պանքնոդները կեղծել դիւրին էր։ Անգլիոյ Պանքան եկած պանքնոդներն այլ եւս ետ չի տար, շրջաբերութեան չի հաներ. ընդհակառակն Ֆրանսայի Պանքան եկածները դարձեալ դուրս կ'հանէ խիստ յաճախ, և հետեւաբար, շատ աւրուած վիճակով շրջաբերութեան մէջ են։ Դրամանենգներն այս պարագայէն օգտուած կ'քաղեն, որովհետեւ հանրութեան համար դժուար է աւրուածները կեղծուածներէն զատել։

ՈՒԱՇԻՆԿԴԸՆԻ «Մասաչուսէց» ծառուղիին վրայ գինով մարդ մը առանց գիտնալու գնաց զարնուեցաւ Նախագահ Մր. Րուզվէլդի, որ պտոյտ մը կ'ընէր Ուաշինկդընի անգլ. դեսպան Լորտ Բոնսֆօդի հետ։ Ոստիկան մը իսկոյն անոր օձիքէն բռնեց, բայց գինով ըլլալն իմացուելով իսկոյն ազատ արձակուեցաւ։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՆՔԱՆԵՐՈՒ. — Միացեալ Նահանգաց ելմտական նախարար Մր. Կէյճ, որ ի մօտոյ պաշտօնէն պիտի քաշուի, անցեալ օր ճաշեց Մր. Ֆրօնք Վանտէրլիբի հետ, որ չորս տարի իր քարտուղարն եղած էր։ Սեղանաւորական հզօր տուներու տասներեք ներկայացուցիչներ եւս ներկայ էին ճաշին։ Կ'ըսուի թէ խորհրդակցութեան առարկայ եղեր է Միացեալ Նահանգաց Ազգային Պանքաները կեդրոնական մեծ ընկերակցութեան մը կամ դաշնակցութեան վերածելու խնդիրը։ Մր. Կէյճ յայտարարեր է որ այսպիսի որոշում մը սնանկութեանց ահուսարսափին առաջքն առնելու մեծապէս պիտի օգնէ։

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ Տիկին Էլէն Ուովիլ՝ Նէպրասքայի (Ամերիկա) դատարանէն ամուսնալուծման վճիռ ձեռք բերաւ իր ամուսնոյն անգութ վարմունքին պատճառաւ։

ԱՌՈՒՏՈՒՐԻ ԴԱԴԱՐ.—Պերլինէ, Վիեննայէ և Բէշդայէ առնուած լուրերը կ'ցուցնեն թէ այս տարի Մնոգեան Տօնին առթիւ առուտուրը շատ պակաս եղած է. բոլոր խանութպանները կը գանգատին գործերու դադարէն։

ԱՆԹԵԼ ՀԵՌԱԳԻՐԸ.—Քանատայի կառավարութիւնը առաջարկեց Մ. Մարքոնիի ամէն դիւրութիւն տալ Քանատայի մէջ գործելու, և հրաւիրեց զայն Օդավա։ Մարքոնի ընդունեց և անցեալ Դչ. օր Քանատա գնաց։

ՆԻՒ ԵՈՐՔԻ Սակարանին մէջ միջնորդի (Պրօքըր) գրասենեակ կամ աթոռ մը ծախուեցաւ 70,000 տոլարի։ Սակարանի աթոռներուն գինն հետըզհետէ կ'բարձրանայ, բայց ցարդ այս գնով աթոռ ծախուած չէր։

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆՆ Ի ՖՐԱՆՍԱ. —Հրատարակուած պաշտօնական տեղեկագրէ մը կ'հասկցուի որ Հոկտ. 15ին վերջացող դպրոցական տարւոյն մէջ մանչերու լիսէներն ու քօլէժներն յաճախող աշակերտաց թիւն անցեալ տարուընէ 4,565 հոգի աւելի եղած է։ Պետական միջնակարգ վարժարանք այսօր 88,202 աշակերտ ունին, Ալժէրիան ալ հաշուոյն մէջ ըլլալով. ամէնէն բարձր թիւն է այս, որուն երբեք հասած է նոյն կարգի աշակերտաց թիւն ի Ֆրանսա։ Դիշերօթիկներու թիւը վերջին տարիներուս սկսած էր պակսիլ, բայց այս տարի աւելցած է, նախորդ տարիէն 105 աւելի։ Իսկ պետական վարժարաններէն տարբեր վարժարաններ յաճախող աշակերտաց թիւն է 76,946, անցեալ տարի՝ 77,766 էր։ Հետեւաբար, զգալի անկում մը կայ, բայց մասնաւորներու կողմէ բացուած կրթական հաստատութեանց մէջ կ'գտնուի այս անկումը։ Եկեղեցական կամ վանական հաստատութիւնք 67,882 աշակերտ ունին, կղերանոցներն այս հաշուէն դուրս են։ Գալ տարի միայն յայտնի պիտի ըլլայ թէ կրօնական միաբանութեանց վերջին օրէնքն ի՛նչ ազդեցութիւն ըրած է այս թուոյն վրայ։ Սակայն ամէն պարագայի մէջ չէ կարծուիր որ այդ օրէնք մեծ տարբերութիւն մը դնէ, որովհետև կառավարական դպրոցներն յաճախող աշակերտաց թիւն երթալով կ'աւելնայ։

ՀԱՒԿԹԻՆ ՄՆԱՑՈՐԴԸ.—Եզան միս ծախելու գործն իրեն մենավաճառ ըրող ամերիկացի Դրըմընը կ'մտածէ հաւկթին գործն ալ իրեն վրայ առնել։ Անցեալ շաբթու Շիքակոյի շոր ուտելեաց հրապարակէն գնեց մէկ անգամէն 15 միլիոն տուզինա հաւկիթ, մէկ տուզինան 23—25 սէնթի, և անմիջապէս գինը բարձրացնելով, երկրորդ օրը մէկ տուզինա հաւկիթն սկսաւ 35 սէնթի ծախել։ Այս կերպով Դրըմընը 1 միլիոն 800,000 տոլարի խոշոր շահ մը պիտի ընէ քանի մը օրէն։

ՊՂԻՆՁԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ.—Միացեալ Նահանգաց մէջ պահեստի պղնձի մթերքին վրայ 1901ին աւելցած է 60,000 թոնօ։ Պղնձին Դրըմընը դիտմամբ գինները բարձր բռնեց, տեսնելով որ օտար երկիրներէ խնդրանքը կ'պակսի։ Ասոր վրայ օտար երկիրներու պղնձահանքի տէրերն սկսան ամերիկեան գիներուն համեմատ գին կարել իրենք ալ, արտադրութիւնն ալ աւելցուցին, և եւրոպական հրապարակը ձեռք ձգեցին։ Նոյնն ըրին նաև Ամերիկացի անկախ հանքատէրները։

ՔՈՐԱՆՍԷՔԻ ՌՃԻՐԸ.—Վկաներու ունկնդրութիւնը վերջանալէն ետքը, ընդհանուր դատախազին եկաւ կարգն իր պահանջման ճառն արտասանելու։ Խուռն բազմութիւն հաւաքուած էր, և կարգապահութեան համար զանազան միջոցներ ձեռք առնուած էին։ Նախագահը ծանոյց թէ խօսքն ընդհանուր դատախազինն էր։ Այս միջոցիս ինքնաբերաբար Պրիէօ ոտք ելնելով, արտասուալից աչքով և դողդոջուն ձայնով բռաւ.—«Տեա՛րք երդուեալք, աշխատութեամբս ապրեցայ, միշտ պարկեշտութեամբ ապրեցայ, կ'երդնում որ անմեղ եմ։» Խորին լռութիւն կ'տիրէ սրահին մէջ, և կ'խօսի ընդհանուր դատախազը։ Պրիէօ, անշարժ, արտեւանունքը կէս գոց, մտիկ կ'ընէ ընդհանուր դատախազին, բայց մերթ արցունքներ կ'իյնան այտերէն վար։ Երդուեալք լարուած ուշադրութեամբ մտիկ կ'ընեն։ Ընդհանուր դատախազը կոչում կ'ընէ անոնց իրենց սրտին ձայնին մտիկ չընել և զգացումով չշարժիլ, այլ բանականութեամբ մտիկ ընել, և մարդասպանը դատապարտել։ Բոլոր փաստերը կ'հաստատեն Պրիէօի մեղապարտութիւնը։

ՎԻԵՆՆԱՅԻ ԽԱՂԱՐԱՆԻՆ մէջ անցեալ օր լեհ ազնուական մը՝ կոմս Բոդօքի, որ Կալիցիոյ և ռուսական Լեհաստանի մէջ ահագին կալուածներ ունի, պօ–քէռ խաղալով 3 միլիոն 200,000 քուրոն կորսնցուց (մէկ քուրոնը մէկ քառորդ մէճիտ է ճիշդ)։ Երկու գլխաւոր շահողներն են աւստրիացի ազնուական մը և մաճառ ճարտար խաղացէտ մը։ Այս դէպք մեծ յուզում առաջ բերած է Վիեննայի ազնուական շրջանակներուն մէջ։ Ֆրանց Եօզէֆ Կայսրն ալ բարկացեր է, որովհետև քանի մը տարի առաջ նմանօրինակ գործի մը հետեւանօք փափաք յայտնած էր որ Կլիւպին անդամները բախտախաղերէ զգուշանան։

ՈՐՍՈՐԴՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ Քաղաքակրթութեան պատմութեան հետ սերտ առնչութիւն ունի։ Երբ մարդէակն երեւցաւ երկրագնդին վրայ, առաջին օրէն պարտաւորուեցաւ ինքզինքը պաշտպանել վայրի կենդանիներուն դէմ։ Ռուսիա առաջինն է այն երկիրներէն, որոց մէջ մասնաւորապէս դժուար եղած է մարդուն կռիւը վայրի անասուններուն դէմ։ Իններորդէն մինչև ԺԶ. դար, ռուս գեղացիք եւ ռուս ազնուականք ոտն առ ոտն, մատ առ մատ կռուեցան հողը գրաւելու համար։ Սպաննուած կենդանիներէն շինուած մուշտակներն ալ հարստութեան աղբիւր մ'էին ժողովուրդին համար։ Սամոյրն առաջին տեղը կ'բռնէր։ Ամէն տարի մինչև երկու միլիոն սամոյր կ'սպաննուէին։ Այս առատութեան պատճառաւ մուշտակները բաւական աժան կ'ծախուէին։ Բերմ նահանգին բնակիչները մէկ կացինի համար կուտային այնքան սամոյրի մուշտակ որքան կրնար մտնել այն ծակէն որով կացինը կոթին միացած է։ Ամէնէն նշանաւոր Ցարերն անվեհեր և եռանդուն որսորդներու համբաւ ձգած են։ Ալեքսիս Միխայլովիչ, որ ԺԷ. դարուն երկրորդ կիսուն ապրեցաւ, բազէ որսալէն զատ ուրիշ բանէ հաճոյք չէր զգար։ Ուքէա- Պէտ-րոնէ+ կ'ամփոփէ հետաքրքրաշարժ հատուածներն այդ Ցարին օրագրութեան, ուրկէց կ'հետեւի թէ 1657ին միջին հաշուով ամէն երկու օրն անգամ մը բազէ կ'որսար, և հրամայած էր որ ամէն վայրկեան իր բռնած բազէներուն առողջութեան վրայ լուր տան իրեն։ Եւ եթէ հիւանդացող գտնուէր անոնց մէջէն, կ'պահանջէր գիտնալ թէ ի՛նչ դարման կ'ըլլար անոնց։ Կայսերական որսարանին պաշտօնէից մէջ կատարեալ համաձայնութիւն կ'ուզէր պահել, եթէ իմանար որ անոնց մէջ հակառակութիւն մը կայ, կ'կանչէր, և կ'պատուիրէր «յանուն Աստուծոյ միաբան և հաշտ ապրիլ», և մինչև իսկ աստուածային պատիժ կ'սպառնար անոնց. «Եթէ պատահի որ Աստուծոյ անհնազանդ գըտնուելով մտիկ չընէք ինծ, անիծեալ ըլլաք թէ՛ այս և թէ հանդերձեալ աշխարհին մէջ։»

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ. — Ինչպէս արդէն ծանուցինք վերջին շաբաթներու մեր քանի մը թիւերով, Կովկասի Կուսակալութեան կողմէ բոլոր գաւառապետներուն հաղորդուած է Կառավարական ծանուցեալ Հրամանագիրը, որով վերջնապէս կ'կարգադրուի բոլոր գաղթականներուն խնդիրը։ Եթէ ասոնք մեկնիլ խնդրեն, իրենց դիւրութիւն պիտի տրուի։ Բայց եթէ մնալ ուզեն, պէտք է հպատակութիւն ընդունին, և անդամակցին գիւղական համայնքներուն (Նահիէներուն կամ քօմիններուն)։ Եթէ հոն չընդունուին, պէտք է իրենց համար տեղ գտնեն քաղաքային համայնքներուն մէջ (Էսնաֆութեան մը անդամ գըրուին, ևն.)։ Եթէ ուզեն Ռուսիոյ ներքին (Եւրոպական) գաւառներն երթալ հաստատուիլ, երկաթուղիի աժան սակով պիտի փոխադրուին, և օրինական ուրիշ դիւրութիւններ ալ պիտի ընծայուին իրենց։ Այս նոր ռուսահպատակներն 1903 թուականէն սկսեալ պիտի ենթարկուին զինուորագրութեան օրէնքին, միւս հպատակներուն համահաւասար կերպով։ Բայց Կովկասեան գաւառներուն մէջ անոնց հող ստանալու իրաւունքը կրճատուած է բացառապէս, այսինքն՝ ուրիշ հպատակներու հետ նոյն իրաւունքը չպիտի վայելեն հոն։ Քսան տարի ետքը միայն կարող են հող գնել, հողատէր ըլլալ Կովկասի քաղաքներէն դուրս։ Այս կանոններ սահմանուած են մինչեւ ներկայ տարւոյ Փետր. ամսոյն եկած գաղթականներուն համար։ Անկէ ետքն եկողներն իրաւունք չունին այս տրամադրութիւններէն օգտուելու, և անպատճառ պէտք է մեկնին, այլուր գաղթեն։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Մաքսային ժողովին անդամ անուանուեցաւ Կայս. Անձն. Գանձուն Նախարարութեան Կայս. կալուածոց դիւանին Տնօրէն Ցարութիւն Չէքի էֆ.։

Զիլէի (Սվազ) Գայմագամ անուանուեցաւ Վէզիրքէօփրիւի (Գասդլա) Գայմագամ Րիւշտի էֆ. որուն յաջորդեց Ալի Ղալիպ պէյ։

—Բ. Մէճիտիէ պատուանշան տրըուեցաւ Շքոտրայի Նախագահ Ատենի Նախագահ Թահիր պէյի։

Հինգերորդ երկաթուղւոյ ոսկի շքադրամ տրուեցաւ Կայսերական իշխան Բարձրապատիւ Մէհմէտ Սէլիմ, Իպրահիմ Թէվֆիք, Ապտ—իւլ—Գատըր, Ահմէտ, Պիւրհանէտտին, Ապտ—իւր—Րահիմ, Ահմէտ Նուրէտտին, Մէհմէտ Պէտրէտտին էֆէնտիներուն, ինչպէս նաև Բարձրապատիւ Զէքիէ, Նաիմէ, Նաիլէ, Շաադէ, Աիշէ, Րէֆիա, Խատիճէ և Ֆէհիմէ Սուլթանուհիներուն։

ԽՐԳԱՅԻ ՇԷՐԻՖԻ ՀԱՆԴԷՍԸ.— Ինչպէս երէկ ծանուցինք, Խըրգայի Շէրիֆի տօնն երէկ կատարուեցաւ մեծահանդէս։ Վեհ. Սուլթանը ժամ 6ին միջոցները, Եըլտըզի Կայս. Պալատէն մեկնեցաւ հանդիսաւոր թափորով։ Ն. Կ. Վեհափառութիւն քառաձի փառաւոր կառքի մը մէջ նստած էր, ձախ կողմն ունենալով Կայսերազուն Իշխան Բարձրապատիւ Պիւրհանէտտին էֆէնտին և դիմացն ալ Սպարապետ Ալի Րիզա փաշան։ Թափորը Պէշիքթաշի պողոտային ճամբով հասաւ Տոլմա—Պահճէի Պալատան քարափը։ Բովանդակ ճամբուն վրայ Օսմ. զօրքեր բարեւի կեցած էին, և ուրեք ուրեք զինուորական նուագախումբեր ախորժալուր եղանակներ կ'ածէին, մինչ հանդիսատես ժողովուրդը Փատիշահըմ չօք եաշա կ'աղաղակէր ցնծագին։ Վեհ. Սուլթանը ժամ 6½ին նստաւ Կայսերական «Թէշրիֆիյէ» շոգենաւակը, որուն դրօշաձողին վրայ պարզուեցաւ իսկոյն Կայսերական դրօշը։ Ն. Կ. Վեհափառութեան հրամանաւ, նոյն շոգենաւակը նստան նաև Կայսերազուն Իշխան Ահմէտ և Պիւրհանէտտին էֆէնտիները, Սպարապետ Ալի Րիզա փաշա, Ծովային Նախարար Միւշիր Հասան փաշա, Արքունի Թնդանօթարանին Միւշիր Զէքի փաշա, Զինուորական Քննիչ Յանձնաժողովոյ Բ. Նախագահ Էտհէմ փաշա, Կայս. աւագ Թիկնապահ Միւշիր Ֆուատ փաշա, Կայս. Պալատան Ա. Քարտուղար Թահսին պէյ, Բ. Քարտուղար և Սենեկապետ Իզզէթ պէյ, Տամատ և Թիկնապահապետ Մէհմէտ փաշա, Սենեկապետ Րաղըպ և Ֆայիգ պէյերը, Բ. Սենեկապետ Նուրի փաշա, և Ա. հրացանակիր Թահիր և հրացանակիր Ահմէտ Ճէլալէտտին փաշաները, Կայս. մասնաւոր Թիկնապահ Ֆէրիգ Զէրքէզ Մէհմէտ փաշա, Ա. հանդերձապետ Իսմէթ պէյ, Կայս. Թիկնապահ Ֆէրիգ Ֆայիգ փաշա և Ֆէրիգ Հաճի Մէհմէտ փաշա, Ֆէրիգ Քէնան փաշա, եւ այլք։ «Թէշրիֆիյէ» Տոլմապահճէի քարափէն մեկնեցաւ հանդիսաւոր գնացքով։ Արքունի «Րէհպէր» շոգենաւակը, որուն մէջ կ'գտնուէր նաւահանգստի վերատեսուչ Ֆէրիգ Սամի փաշա, իբրև նաւուղիղ ձախ կողմէն, և «Պէյլէրպէյ» շոգենաւակն ալ, որուն մէջ կ'գտնուէին Կայսերազուն Իշխան Բարձրապատիւ Սէլիմ, Իպրահիմ Թէվֆիք և Ապտ—իւլ—Գատըր էֆ.ները, աջ կողմէն կ'ուղեկցէին «Թէշրիֆիյէ»ի։ Ի վերջոյ կուգային «Րաղըպէ», «Գամէր», «Մէսիրրէթ», «Զիյնէթ», «Հիտայէթ» արքունի շոգենաւակները։ Երբ Կայսերական նաւակին թափորն յուշիկ կ'յառաջանար դէպ ի Սարայ—Պուրնու, Կայս. «Սթամպուլ», «Իզզէտտին» և «Ֆուատ» զրահանաւերն և Օսմ. պահականաւք դրօշազարդուեցան, մինչ ծովային զինուորք, կայմերուն վրայ բարեւի կեցած, Փատիշահըմ չօք եաշա բարեմաղթութեամբ կը թնդացնէին օդը։ Բովանդակ ճամբուն վրայ բոլոր օտար պահականաւերն և առեւտրական նաւերն ևս դրօշազարդուած էին, և ըստ սովորութեան ողջունեցին Կայս. գնացքը։ Շիրքէթի և Մահսուսէի շոգենաւերն ևս դրօշազարդուած էին։ Նաւահանգստի Վարչութեան, Արքունի Նաւարանի և ծովային ոստիկանութեան մակոյկներն երկուստեք կարգաւ շարուած էին։ «Թէշրիֆիյէ» ժամ 7ին միջոցները ժամանեց Թոփ—Գափուի Պալատան Եալը—Գափուի քարափը, ուր ընդ առաջ ելան Կայս. Բ. զօրաբաժնին հրամատար և աւագ Թիկնապահ Միւշիր Շէվքէթ փաշա, Քաղաքապետ Րըտվան փաշա և Թոփ—Գափուի Պալատան պահապան Րիզա փաշա։ Օսմ. զօրքեր երկու կարգի վրայ բարեւի կեցած էին։ Վեհ. Սուլթանն ոտքը ցամաք կոխելուն պէս, Պաղտատ Քէօշկի պահականոցին աշտարակին վրայ պարզուեցաւ Կայս. անձնական դրօշը։ Ն. Կ. Վեհափառութիւն չքեղ կառք մը նստաւ, Իր դէմն ունենալով Կայսերազուն Իշխան Պիւրհանէտտին էֆ.ն և Սպարապետ Ալի Րիզա փաշան, և մինչև երրորդ դրան առջեւ կառքով գնաց, ուր ընդ առաջ ելան բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնատարք։ Վեհ. Սուլթանն հոն կառքէն վար իջնելով, ոտքով գնաց Պաղտատ Քէօշկը, և քիչ մը հանգիստ առնելէ վերջ, Նամազ ըրաւ, ապա Մարգարէին Վերարկուին պահուած սրբարանը գնաց և վերարկուին պահարանն Իր ձեռամբ բանալով համբուրեց։ Յետոյ Կայս. արտօնութեամբ, կարգաւ ի համբոյր մատուցան Մեծ—Եպարքոս Բարձր. Սայիտ փաշա, Շէյխ—իւլ—Իսլամ Ճէմալէտտին էֆ., բոլոր նախարարք, Միւշիրք, Իւլէմայք և բարձրաստիճան պաշտօնատարք, որք այս առթիւ նուէր ստացան մետաքսահիւս թաշկինակներ, սրբազան վերտառութեամբ։ Ապա Կայսերազուն Իշխանները, Մայր—Թագուհին և Կայսերական Կանանոցին Բարձրապատիւ Տիկնայք համբուրեցին սրբազան վերարկուն։ Համբոյրի արարողութենէն վերջ, Վեհ. Սուլթանը, նոյն սրբավայրին մէջ աղօթեց, և ունկնդրեց կրօնական ընթերցումներու։ Ի վերջոյ բարեմաղթութիւնք եղան Կայսերական արեւշատութեան համար։ Վեհ. Սուլթանն ոտքով վերադարձաւ Պաղտատ Քէօշկը, և հրաման ըրաւ դրամական պարգեւներ բաշխել պարտէզին մէջ բարեւի կեցող զինուորներուն։ Կայս. Անձն. Գանձուն Նախարար Վսեմ. Սագըզ Յովհաննէս էֆ. և խորհրդական ու համարակալ Պէյն իսկոյն անձամբ կատարեցին նոյն Կայս. հրամանը։ Ընտէրունի և Կայս. Գանձուն բոլոր պաշտօնատարք ևս Կայս. նուէրներու արժանացան։ Վեհ. Սուլթանն հրաման ըրաւ որ վերադարձն ևս ծովային ճամբով տեղի ունենայ։ Ուստի ժամ 11½ին միջոցները Պաղտատ Քէօշկէն մեկնեցաւ, և Թէշրիֆիյէ շոգենաւակով և Իր հետեւորդներուն հետ ժամ 12ին հասաւ Օրթագիւղի մզկիթին քարափը նոյն հանդիսաւոր թափորով, և անկից քառաձի կառքով մը և Ենի—Եօլի ճամբով դարձաւ ի Կայս. Պալատ։

—Կայս. Կանանոցի Բարձրապատիւ Տիկնայք, փառաւոր կառքերով, երէկ ցամաքի ճամբով գացին Մարգարէի վերարկուին սրբավայրը։ Մայր—Թագուհին բովանդակ ճամբուն վրայ ողորմութիւններ բաշխել տուաւ։

—Ընտէրունի աղաներն իրենց գծած պատկերներն և գեղատառ վերտառութիւններն երէկ ներկայացուցին Վեհ. Սուլթանին, որ գնահատելով զանոնք, դրամական պարգեւներ բաշխել տուաւ անոնց։

—Կայս. հրամանաւ, երեկոյին բէնիրլի—բիւէ բաշխուեցաւ այն բոլոր Օսմ. զինուորներուն, որք երէկուան հանդէսին մասնակցեցան։

—Պէշիքթաշէ մինչև Թոփ—Գափուի Պալատը, բովանդակ ճամբուն վրայ, դպրոցական ուսանողք, իրենց համազգեստներով, բարեւի կեցած էին ուրեք ուրեք, և երգեր կ'երգէին։

—Բարձրապատիւ Մայր—Թագուհին և Կայս. Կանանոցին Բարձրապատիւ Տիկնայք երէկ այցելեցին նաև Էսկի—Ալի—Փաշայի Խըրգայի—Շէրիֆ մզկիթը, ուր պահուած է նաև Մարգարէին մէկ ուրիշ վերարկուն։

—Մեծ—Եպարքոս Բարձր. Սայիտ փաշա, Շէյխ—իւլ—Իսլամ էֆէնտին, և Կայս. Գանձուն Քէթխիւտա Խուրշիտ պէյ երէկ Կայս. մասնաւոր մեծարանքներու արժանացան։

ԻՏԱԼԱԿԱՆ դեսպան Մարքի տի Մալասբինա և իր տիկինն Յունուարի վերջերը Քասալ պիտի ուղեւորին երկամսեայ արձակուրդով։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ.—Աթէնքի Օսմ. դեսպան Րիֆաթ պէյ Եօրկիոս Թագաւորին անուան տարեդարձին անձամբ շնորհաւորեր է։

—Ն. Վսեմութիւնն անցեալ Բշ. օր երկար տեսակցութիւն մը ունեցեր է Յունաստանի վարչապետ Մ. Զայիմիսի հետ։

ԵՐԿՐԱՇԱՐԺ.—Անցեալ Դշ. առաւօտ Իզմիրի մէջ պատահած երկրաշարժը միևնոյն պահուն Պրուսայի և Պալըքէսիրի մէջ ևս զգացուեր է։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ.—Ռուս դեսպան Մ. Զինովեվ և խորհրդական Մ. Չէրպաչէվ նախընթաց օրը Ֆէնէր երթալով, երկար տեսակցութիւն մը ունեցան Յունաց Պատրիարք Տ. Եօաքիմ Գ.ի հետ։ Յետոյ այցելութիւն տուին նաև Երուսաղէմի Պատրիարք Տ. Դամիանոսի։

ՍԵՂԱՆԱԽՈՐ Մ. Էվէլինիտէս ծանոյց Յունաց Պատրիարքին թէ Պատրիարքարանի շրջափակին մէջ շինուելիք մատրան ծախքն ինք պիտի հոգայ։

ՄԱՀ ՏԻԿԻՆ ՌԱՆՊԷՌԻ.— Ցաւելով կ'իմանանք թէ Ոսկեխոտի Ռէժիի Ընդհ. Տնօրէն Մ. Ռանպէռի տիկինը, որ առողջական պատճառաւ Գահիրէ կ'գտնուէր, նախընթաց օրը մեռեր է։ Մ. Ռանպէռ երէկ «Բրէնս—Ապպաս» շոգենաւով Եգիպտոս ուղեւորեցաւ։ Ռէժիի և Օսմ. Կայս. Պանքայի բարձր պաշտօնատարք շոգենաւ գացին կրկին պարտականութիւն մը կատարելու. թէ՛ իրենց ցաւակցութիւններն յայտնելու և թէ ողջերթ մաղթելու։ Մ. Ռանպէռ մեր հրապարակին վրայ ընդհանուր համակրութիւն կ'վայելէ իր մատուցած գնահատելի ծառայութիւններով Ռէժիի Վարչութեան մէջ։

ՍԵԼԱՆԻԿԻ քարափին շահագործութեան իրաւունքը, 5 տարուան համար, տրուեցաւ շինող ֆրանս. ընկերութեան։ Սելանիկի նաւահանգստին շինութեան արտօնատէր Մ. Էտմօն Պարթիսոլ վերջերս Սելանիկ երթալով, տեսակցեր է կուսակալ Թէվֆիք պէյի հետ։

—Սելանիկի մէջ ոսկիի հանք մը գտնուեր է։

ՍՆԱՆԿԱՑՈՂ ՍՆԱՆԿԱՑՈՂԻ.—Պոլսոյ կողմը չուխայի մեծ վաճառական մը չկրնալով իր վճարումները կատարել, երկար պայմանաժամ մը խնդրեր է իր պարտատէրներէն։ Այս վճարումներու դադարման երեսէն, եւրոպական տուն մը, որ յանձնակատարութեամբ կ'զբաղի, դժուարութեանց ենթարկուելով, ինքն ալ վճարումները դադրեցնելու վիճակին մէջ է, կ'ըսուի։

ԳՈՂՈՒԹԻՒՆ.— Պէշիքթաշի Ենի Մահալլէ թաղին բնակիչներէն լուսանկարիչ Թաղէոս էֆ. Հանէսեան, երէկ, ժամը 7ին, երբ Պրուսա խանին սանդուղէն վեր կ'ելնէր, գլխարկաւոր անծանօթ մարդու մը կողմէ կուրծքին հարուած մը կ'ընդունի։ Քիչ յետոյ, երբ ժամացոյցը նայիլու կ'ըլլայ, կ'տեսնէ որ 35 ոսկի արժող ժամացոյցը շղթայով միասին գողցուեր է յիշեալէն։

—Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, Գերմանացի զինավաճառի մը խանութն երէկ գիշեր գող մտնելով, 55 րիվոլվէր չորթեր է։

ԱՀՌԵԼԻ ՈՃԻՐ.—Բերայի Թարլա—Պաշը թաղին մէջ, մինչորդ Տիրան աղայի շինել տուած կիսաւարտ ապարդմանին մէջ նախընթաց գիշեր ոճիր մը գործուեցաւ։ Գործաւորապետ Յակոբ, իբրեւ պահապան, գիշերները նոյն շէնքին մէջ կ'անցնէր։ Երէկ առաւօտ երբ գործաւորք աշխատելու դարձան, գործաւորապետ Յակոբը սպաննուած գտան իր անկողնին մէջ։ Վիզէն և շատ մը տեղերէն վիրաւորուած էր։ Ճարտարապետ Աւետիս էֆ. իսկոյն ոճիրն իմաց տուաւ ոստիկանութեան։ Բերայի կառավարչութեան կողմէ Տօքթ. Լուիճի և Տիգրան պէյերն և երկու Սէր—Քօմիսէրներ ոճիրին վայրը փութալով քննութիւն կատարեցին։ Սպաննեալ Յակոբ հինգերորդ յարկը՝ իր անկողնին մէջ պառկած էր արեան ճապաղիքներու մէջ, գլուխը մարմինէն բաժնուած և փորոտիքը դուրս թափած։ Անկողնին քով կ'գտնուէր սնտուկ մը, որ բացուած չէր։ Ոճրագործը գործաւորապետին միւս գոյքերն ալ չէր գողցած, որով հասկցուեցաւ թէ ոճիրին շարժառիթն ո՛չ թէ գողութիւն, այլ վրէժխնդրութիւն էր։ Վէրքերու քննութենէն հասկցուեցաւ թէ զանազան հատու զէնքեր գործածուած էին, եւ հետեւապէս ոճրագործները քանի մը հոգի են։ Ոստիկանութիւնը փութոյ խնդրութեամբ յառաջ կ'տանի իր քննութիւնները և քանի մը բանուորներ ձերբակալուած է։ Գտնուած է նաև դաշոյն մը, որուն ծայրը ծռած էր։ Կ'ըսուի թէ կնոջական խնդիր ալ կայ այս ոճրին մէջ, որովհետև Յակոբ տուն մը կ'յաճախէ եղեր, ուր կ'լուացուէին իր ճերմակեղէնք։

ՄԵԾ ԵՐԿՐԱՇԱՐԺ
Յ'ԱՅՎԱԼԸՔ
200 ՏՈՒՆԵՐ ՎՆԱՍՈՒԱԾ

Այվալըքէ Դեկտ 8/21 թուով հետեւեալը կ'գրեն «Մօնիթէօռ»ի.— «Երկրաշարժի բաւական բուռն ցնցում մը զգացուեցաւ հոս Դշ. օր, առաւօտեան ժամ 5.35 (Ը. Ե.)։ Ցնցման ուղղութիւնը թաւալական էր, նախ Հիւսիսէն Հարաւ և ապա Արեւմուտքէն Արեւելք ուղղութեամբ։ Իբր 200 տուներ ճեղքուեցան, եւ անբնակելի դարձան։ Ցնցումները շարունակեցան մինչև երէկ։ Խուճապը մեծ է։»

Ուրիշ մասնաւոր տեղեկութեանց նայելով, բնակիչք ընդոստ արթննալով, կիսամերկ փողոցները թափեր են սարսափահար։ Ծերք, կանայք եւ տղայք սրտաճմլիկ աղաղակներ կ'բառնային։ Մանրամասնութիւնք դեռ կ'պակսին։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. ՀՕՏԵԱՆ

Ղալաթիա, Մէթռօ ճատտէ, Քէլէկճիլէր թիւ 52

Ամէն օր մինչև կէս գիշեր իրեն դիմող հիւանդներուն բերնին ամէն տեսակ հիւանդութիւնները կ'դարմանէ ըստ նորագոյն դրութեան։

Ակռայ կ'լեցնէ ոսկի, բլաթին, և էմայլ, նուրբ և ճաշակաւոր և բնականի նման արհեստական ակռաներ կ'շինէ քաուչուքով և ոսկիով։ Ատամնահանութիւն կատարելագործեալ աքցաններու միջոցաւ։ Ակռայի ամէն գործողութիւնք երաշխաւորեալ և վերջին դրութեամբ և կատարելագործեալ գործիքներու միջոցաւ։

Բշ. Դշ. և Շբ. օրերը մինչև կէսօր Գահճէ—Գափու թիւ 42 ատամնաբոյժ Ա. Սահակեանի դարմանատունը պիտի ընդունի իրեն դիմող Պոլսոյ յաճախորդները։ Կիրակի օրեր ժամադրութեամբ։ 25—22

ԱՅՏԱՐԱՐԻ ԿԱՆԱՅՔ ձմրան ցուրտէն ինքզինքնին պահպանել և գեղավայել զգեստներ ունենալ երբ կ'ուզեն թող դիմեն Մ. Տ. Գամճեան եղբարց վաճառատունը՝ ուր այս անգամ բերուած է մանիֆաթուրայի վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներ եւ մանաւանդ բրդեղէններու ճոխ մթերք. նաև պատրաստ ժաքէթներ և պատուհաններու վարագոյրներ։

6—6 Մէհրան և Տիգրան Գամճեան

ՔՕՆԵԱՔ ՊԱՐՊԱՐԵՍՍՕ Մ. ԵՂԲԱՐՑ

Պարպարէսսօ Մ. Եղբարց յունական քօնեաքը զուտ խաղողի արտադրութիւն է որուն ճարտարարուեստական հսկայ գործարանը հիմնուած է 1840ին և փոխանցուած է իրենց հօրմէն։

1875 և 1888ի յունական արուեստահանդէսը, 1889ի Բարիզի, 1894ի Շիքակոյի ամերիկեան, 1895ի Պորտօի և 1900ի Բարիզի մեծ արուեստահանդէսները միահամուռ հաստատած են որ Պարպարէսսօ Մ. Եղբարց ժառանգաւոր պատրաստած քօնեաքը թէ՛ հին է թէ՛ ընտիր և ի հաստատութիւն՝ վարձատրած են պաշտօնական մրցանակներով։ Նոյնը կ'հաստատեն նաև մեծահռչակ բժիշկներու և քիմիագէտներու վկայութիւնք։

Պարպարէսսօ Մ. Եղբարց քօնեաքին տրուած ուրիշ բազմաթիւ վկայագրերը աւելորդ է թուել, քանի որ հանրածանօթ է այն և սպառումը՝ առաջին աստիճանի, մրցակիցներուն նախանձը գրգռելու չափ։

Մենաշնորհ-) Արծաթ Խաչ Ս. Փրկչի
եալ պատուէ) Հայթայթիչ արքայական
) տան Ն. Վեհ. Յունաս-
) տանի թագաւորին.

Ամէն յանձնարարութեան համար դիմել,
Առ Պ. ԱԹԱՆԱՍ Ս. ՔԱԼՕՄԻՐԻՍԹՕ
Ներկայացուցիչ Թուրքիոյ
Կ. Պոլիս. Կալաթա

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՆԻՍՏԸ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Տ. ԳԷՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Խառն ժողովն այսօր գումարեցաւ Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ։ Կարդացուեցաւ Խապայեան Սրբազանին ղրկած Տեղեկագիրը։ Հաստատուեցաւ ընտրութեան օրինաւորութիւնը։ Նկատողութեան առնուեցաւ նորընտիր Կաթողիկոսին հրաժարագիրը։ Բացարձակապէս մերժուեցաւ։ Որոշուեցաւ իրեն գրաւորապէս հաղորդել իր ընտրութիւն, և վաւերացումն Ազգ. Վարչութեններէն, որ պիտի խնդրէ Կայս. հաստատութեան Հրովարտակը։

*. Կարդացուեցան Մշոյ Պատր. Փոխանորդէն եկած պաշտօնագրերը, Առաքելոց Վանքի Որբանոցին համար եղած կարգադրութիւնները, որոց վրայ խորհրդակցութիւնք չէին վերջացած, երբ լրագիրս մամուլին յանձնուեցաւ։

*. Տ. Գէորգ Սրբազան որոշեր է ամէն պաշտօնէ հրաժարելով, ժամանակ մը Երուսաղէմ մեկուսանալ։ Երէկ Ս. Պատրիարք Հայրն և Դիւանապետք իրեն հետ երկար խորհրդակցութիւն ունեցած են, որ արդիւնքի մը չէ յանգած։

Պատրիարքական Փոխանորդ Սրբազանն երէկ հելլենական դեսպանատունն երթալով, Յունաց Եօրկիոս Թագաւորին ծննդեան տարեդարձին առթիւ, ի դիմաց Ս. Պատրիարքին շնորհաւորութիւն յայտնեց դեսպանին։

—Մանչեսթըրի Հայերուն կողմէ և ուրիշ գաղութներէ հարցում եղեր է Ս. Հայրապետին թէ Աստուածաշունչ մատենին Էջմիածնի Տպարանէն հրատարակումն ո՞ւր մնաց։ Ն. Ս. Օծութիւն պատասխանել տուեր է թէ Յունուար ամսուն մէջ պիտի սկսի։ (Կը յուսանք որ այս կարգադրութիւն վերջնական է, այս անգամ։)

—Կ'ըսուի թէ Նպաստից Յանձնաժողովն իր առաջիկայ նստին մէջ վերստին պիտի զբաղի եղեր Բաղէշն Վրդ.ին և Վանրիճ Վրդ.ին ծանօթ հաշուական խնդիրներովը, որք դեռ չեն լմնցեր։ Միւս կողմէ, կ'ծանուցուի թէ Ս. Պատրիարք Հայրն իբրև անկանոն մերժեր է Վանրիճ Վրդ.ին Քղիի Առաջնորդութենէն ունեցած պահանջքը։ Փափաքելի էր որ պատկանեալ իշխանութեան կողմէ այս կրկին խնդիրներուն վրայ վաւերական ծանօթութիւն մը հրատարակուէր, և գայթակղութիւնը վերնար մէջտեղէն։ Նպաստից Յանձնաժողովն ինք պէտք է որ այսպիսի վաւերական հրատարակութիւն մ'ընէ, Նպաստից աղբիւրն ինք չցամքեցնելու համար, որ իր գոյութեան միակ պատճառն է ապաքէն։

—Պէրութէ կ'գրեն մեզ թէ տեղւոյն ֆրանսական բժշկական վարժարանի այս տարուան 18 շրջանաւարտներուն մէջ կ'գտնուին մէկ քանի Հայեր ալ, որք յաջողութեամբ անցուցած են իրենց քննութիւնները։ Ի մէջ այլոց Վահան էֆ. Խմիրխանեան, Մերսինցի, բժշկական վկայական ստացաւ։ Պ. Ե. Դրդոյեան, Պիթլիզցի, և Պ. Հ. Թաթարեան, Կեսարացի, յաջողութեամբ անցուցին իրենց երրորդ Տոքթօրան, ինչպէս նաև Պ. Զարեհ Ամասունի, Եօզղատցի, և Պ. Սիմօն Ճըլճըլեան, Մալաթիացի, իրենց Ա. և Բ. Տոքթօրաններն անցուցին խիստ յաջողապէս։ Վերջինը, Պ. Սիմօն Ճըլճըլեան, այս տարի ևս իր կարգին մէջ առաջին հանդիսացած ըլլալով, Դպրոցին մեծ մրցանակն և դրամական պարգեւն ստացաւ։

—Ուսքըրի Հայ Աւետարանականաց «Սրբոց Մարտիրոսաց եկեղեցիին» նուիրագործումն երէկ ծանուցեր էինք։ Թէև բաւական ատենէ ի վեր Հայ բողոքականներ գտնուած են Ամերիկայի մէջ, բայց ասիկա կրօնական առաջին շէնքն է զոր կ'հիմնեն հոն։ Այս մասին Ազգ. Եկեղեցւոյ զաւակները կանխած էին արդէն, կառուցանելով Հայոց Ս. Փրկչի եկեղեցին, որ կեդրոնն է Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան։ Տքդ. Էլէնի բանախօսութիւնն ալ, զոր յիշեցինք, Հայ. Եկեղեցիին ծառայութիւններուն և անոր հաւատարիմ զաւակներուն կրօնասիրութեան և յարատեւութեան վրայ առած գովեստներովը, ուշագրաւ էր մանաւանդ անով որ հակապատկեր մը կ'կազմէր Պօրտի Միսիոնարներուն Միշընէրի Հէրալտ ամսաթերթին մէջ երբեմն հրատարակած այլանդակ տեղեկագիրներուն, որով Հայերն իբրև նիւթապաշտ, կռապաշտ, թանձրապաշտ կ'ներկայացնէին, որովհետև Հայոց եկեղեցիներուն մէջ պատկեր, մոմ, խունկ և խաչ գտեր էին։ Այս Միսիոնարք յետ երկարամեայ բնակութեան, հիմակ տակաւին աղէկ կ'ճանչնան Հայ. Եկեղեցին և անոր հոգեւոր հօտը։ Քսան տարի առաջ Մասիս օրաթերթին մէջ Միշընէրի Հէրալտի այլանդակութիւններուն դէմ մեր մղած պայքարն այսօր հաճութեամբ կ'յիշեցնեն մեզ՝ Տքդ. Էլէնի նման ուղղամիտ Միսիոնարներու այս օրուան յայտարարութիւնները։

—Թաղերու և եկեղեցեաց յատուկ գանձանակներ երբեմն շատ անարժաններու ձեռքը կ'իյնան։ Գում—Գափուի դրսի Ս. Յարութիւն եկեղեցւոյ երկաթէ դրոցին գանձանակներն երկու առաւ—փախանցներու ձեռք կ'տրուին։ Ասոնք մանրուքի համար իրենց յանձնուած դրամագլուխը կ'ուտեն։ Արդ, վնասն ո՞վ պիտի քաշէ. ո՞վ է պատասխանատուն։

—Հանգուցեալ Տիկին Մաքրուհի Փափազեանի յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղկեպսակի նուիրած են Ազգ. Հիւանդանոցին՝ Գրիգոր էֆ. Գարակէօզեան, Տէր և Տիկին Մագասա էֆ. Շահպազ 216ական ղրշ., Խաչիկ էֆ. Կեսարեան, Նշան էֆ. Կեսարեան 120ական, Տիգրան էֆ. Նուսուֆեան, Յովհաննէս էֆ. Գարակէօզեան, Մեսրովպ էֆ. Ֆէնէրճեան, Տէր և Տիկին Տքդ. Դաւիթեան, Տէր և Տիկին Միհրան էֆ. Զօպանեան, Այրի Տիկին Երվանդ Նէվրուզ, Արտաշէս էֆ. Ե. Ֆրնտըքլեան 108ական։

Լեւոն Պէյ Փափազեան, ինչպէս նաև Փափազեան, Գարակէօզեան, Հովուեան, Պէրպէրեան և Երկանեան ընտանիքները խորին շնորհակալութիւն կ'յայտնեն ամէն անոնց որք հաճեցան ներկայ գտնուիլ հանգուցեալ ՏԻԿԻՆ ՄԱՔՐՈՒՀԻ Մ. ՓԱՓԱԶԵԱՆԻ յուղարկաւորութեան և այս տխուր առթիւ ցաւակցութիւն յայտնեցին։

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ՌՈՒՍՉՈՒԿԸՐ, 26 Դեկտ.—Ասսուայի կառավարիչ Մր. Ճա ելմտական նախարար անուանուեցաւ Մր. Կէշֆի տեղ։

ՄԱՏՐԻՏ, 26 Դեկտ.— Լիզպոնէ առնուած լուրերու նայելով, նախարարական ճգնաժամի տագնապ մը դրոյցը կ'հաստատուի։ Բորդուկալի Պանքային կառավարիչ Մ. Վիլլէնայի պիտի յանձնուի նոր նախարարութեան կազմութիւնը։

ՆԱՊՈԼԻ, 26 Դեկտ.— Այսօր պատահած բուռն փոթորկին հետեւանօք, քանի մը տուներ փլան։ 1 հոգի մեռաւ և 36 հոգի վիրաւորուեցան։

ԿՕԹԱ, 26 Դեկտ.—Վիլհէլմ կայսր այսօր, 300րդ տարեդարձ ծննդեան Բարեպաշտ կոչուած Էռնէստ դուքսին, խնդութիւն յայտնեց որ այս տօնն կ'զուգադիպի Ծննդեան Տօնին, որ ամէն սիրտ կ'տաքցնէ խաղաղութեան եւ միութեան գաղափարին համար։ Կայսրն յայտարարեց նաև թէ իր կեանքին նպատակն է միացնել Գերմանիոյ բոլոր աւետարանական եկեղեցները։

ՆԱՄԻՕՆԱԼԻ ԵՒ ՖԱՌՆԻԷՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

ԼՈՆՏՈՆ, 26 Դեկտ.—Պուէնոս Այրէսէ հեռագիր մը կ'ըսէ թէ Արժանթինի ժողովուրդը շատ գոհ է Չիլիի և Արժանթինի միջև կնքուած պայմանագրութեան համար, որով Անգլիոյ իրաւարարութեան կ'յանձնուի իրենց վէճը։

—Անգլիոյ Պատերազմական Պաշտօնատունը կ'ծանուցանէ թէ այժմ պատերազմի ասպարէզը գտնուող Պօէրներուն թիւն է 9,400։

ՊԱՐԻԶ.—Մ. Սանդօ Տիւմոն ի մօտոյ նոր փորձեր պիտի ընէ ի Մոնթէ—Քարլօ, ղեկաւոր օդանաւով մինչև Ալժերիա երթալու համար, Միջերկրականէն անցնելով։

—Պուէնոս Այրէսէ կ'հեռագրուի թէ օտար դեսպանք շնորհաւորեցին Չիլիի արտաքին գործոց նախարարը, Արժանթինի հետ Չիլիի ունեցած վէճն իրաւարարութեան յանձնուած ըլլալուն համար։

ՊՐԱԿԱ.—Հակագերման ցոյցերը կը շարունակեն Պրակայի մէջ, Մոսկուայի մէջ ալ հակագերման ծանր ցոյցեր կ'ըլլան. քանի մը ձերբակալութիւններ կատարուեցան։

ՄԱՏՐԻՏ.—Վարչապետ Մ. Սակաստա, և Երեսփ. Ժողովէն ու Ծերակոյտին նախագահներն համաձայնեցան ընդդիմադիր կուսակցութեան հետ, ելմտացոյցին քուէարկութիւնն ապահովելու համար։

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

ՓԱԿՈՒՄ

Օսմ. Պանք. Սէհմ Դ.	Օ. Ո.	26 33½
Ամէնէն բարձր գին	»	26 36½
Ամէնէն վար գին	»	26 32½
Ռումէլիի Երկաթուղի	Ֆր.	103 75
Ամէնէն բարձր գին	»	104 —
Ամէնէն վար գին	»	103 50
Թրամվայ	»	98 50
Ամէնէն բարձր գին	»	98 50

ԲԱՑՈՒՄ 14/27 Դեկտ.

Օսմ. Պանք. Սէհմ Դ.	Օ. Ո.	26 36
» » ժամ 7ին		26 37
Ռումէլիի Երկաթուղի	Ֆր.	104 —
» » ժամ 7ին		104 ⅜
Թումպաքի բաժնեթ.	Ղրշ.	565 —
» պարտաթ.	Ֆր.	481 —
Տէրքոսի ջուրի Ընկ.	Ֆր.	247 —
Մարաթ Կ. Պոլսոյ	»	463 —
Օսմ. Ապահովագր. Ընկ.	»	3 57½
Թրամվայ	Ֆր.	98 52
Անատոլուի երկաթ. պարտթ.	»	505 —
» մէճիտ.	Ա. Ո.	09 67
Եգիպտ. Քրէտի Ֆոնս.	Ֆր.	264 —
Սոս. Օթ. Շահմէ և Վալ.	Ա. Ո.	— 12

ՍԹԻԼԱՆՑ

Քօնսոլիտէ մէկ օրուան	Օ. Ոսկի	— 95
» ութ օրուան »	»	2 20
Ռումէլի Երկաթ. »	Ֆր.	2 —

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

20 ֆրանքնոց	Ղրշ.	87 31
Անգլիական ոսկի	»	110 07
Բօլ Էմբէրիալ	»	90 20
Մէճիտիէ արծաթ	»	108 07
Քրիմիք	»	51 06
Մէթալիք	»	99 —
Ռուբլ Թղթադրամ	»	8 57

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԱՑ

Լոնտոն 3 ամիս	Ղրշ.	109 15
» » » Աւստր. Թղթ.	»	109 ⅛
» չէք	»	110 12½
Բարիզ 3 ամիս Պնք.ի Թղթ.	Ֆր.	22 95
» 3 » Աւստ. Թղթ.	»	23 —
» չէք	»	22 78¾
Վիեննա չէք	քուրոն	21 68
Պերլին չէք	մարք	18 48
Օտեսա չէք	ռուպլ	8 56

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ԼՈՆՏՈՆ, 25 Դեկտ.

Օսմ. Պանք. Սէհմ Բ.	Ա. Ո.	49 75
» » » Գ.	»	26 75
» » » Դ.) բաց.	»	24 37
) գոց.	»	24 37
Օսմ. Կայս. Պանքա	»	11 12
Եգիպտական միացեալ	»	107 —
Անգլ. Քօնսոլիտէ	»	94 —
Այտընի Երկաթուղի	»	13 50
Փոխառութիւն Գալաթայ	»	82 —
» հելլենական 1881	»	39 50
» » 1884	»	39 50
Մոնօփոլ	»	42 50
Կուպոն ... 1888	»	85 —
» Նոր 1892	»	85 50
Փոխառ. Բարիզի վրայ	»	25 36¼
Թրամվայ	»	4 —
Դրամազեղչ		4 —

ՊԱՐԻԶ, 26 Դեկտ.

Օսմ. Պանք. Սէհմ Դ.) բաց.	Ա. Ո.	24 80
) գոց.	»	24 80
» » » Գ.		26 97
Օսմ. Կայս. Պանքա	Ֆր.	526 —
Օսմանեան	»	457 50
Ռումէլիի Երկաթուղի	»	105 —
Ֆրանս. Ռանթ 3% Գ. Կ.	»	100 05
Քրէտի Լիոնէ	»	998 —
Պանք տը Պարի	»	990 —
Իտալական Ռանթ	»	101 10
Սպանիական արտաքին	»	76 40
Թրամվայ	»	100 50
Չէք Լոնտոնի վրայ	»	25 110
Դրամազեղչ Ֆրանս. Պանքայի		3 —

ՊԵՐԼԻՆ, 25 Դեկտ.

Օսմ. փոխառութ. 1888	մարք	99 25
Անատոլուի Երկաթուղի	»	99 80
Ռումէլիի Երկաթուղի	»	101 50
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամիս	»	20 220
Դրամազեղչ		4 —

ՎԻԵՆՆԱ, 25 Դեկտ.

Փոխառ. Բարիզի վրայ	քուրոն	95 —
» Լոնտոնի վրայ	»	239 10
Ռումէլի Երկաթուղի	»	99 70
Օսմ. Ռէժի	»	285 —
Դրամազեղչ		4 —

ԳԱՒԱՌԻ ԵՒ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ մեր բաժանորդներուն կ'յիշեցնենք թէ ՀԱՍՑԷԻ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ համար երկու ղրշ.ի նամականիշ մը անհրաժեշտ է։ Առանց որու, հին հասցէն ԱՆՓՈՓՈԽ Կ'ՄՆԱՅ։

ՏՕՔԹ. ՄԱՀԷԻ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ

Կ. Պոլսոյ Գաղղ. դեսպանատան նախորդ բժիշկ եւ Բարիզի Բժշկական Ակադեմիին Թղթակից, հանգուցեալ Տօքթ. Մահէ հետեւեալը գրած է 1893, Օգոստոս 12 թուականաւ։

Սիրելի պարոն,

Բազմաթիւ հիւանդներուս, գլխաւորապէս անարիւն տղոց, հիւանդութենէ ապաքինող անձանց, ձեռատի աղջիկներու, տկարակազմներու, թոքախտաւորներու եւ թոքախտէ բռնուելու ստուերն հիւծողներու յանձնարարեցի ձեր ՆՈՒՐԻՒ ԳԻՆԻՆ, եւ բախտաւոր եմ ծանուցանել ձեզ որ, միշտ արդիւնաւոր եղաւ այն եւ շատ նպաստեց անոնց առողջութեան։ Ձեր այս գինը դիւրաւ կը խմեն ամէն հասակէ անձինք, անոր համար որ խիստ քաղցրահամ է եւ ամէն ստամոքսի կը յարմարի. ասկից զատ առաջին աստիճանի կազդուրիչ ըլլալով, գործածողներ շուտով կուժովնան ու կը զօրանան։ Վստահ եմ որ ՆՈՒՐԻՒ ԳԻՆԻՆ մեծ ծառայութիւն կը մատուցանէ բժշկական աշխարհին իր անվրէպ ազդեցութեամբ։

Ընդունեցէք եւն.
ՏՕՔԹ. Ժ. ՄԱՀԷ

Ինչպէս վերոյիշեալ նամակն ալ կը հաստատէ, ՆՈՒՐԻՒ ԳԻՆԻՆ իր խնամուած պատրաստութեան շնորհիւ սքանչելի դեղ մ'է, որուն նմանը եւ ոչ մէկ տեղ, ոչ իսկ Բարիզի մէջ յաջողած են պատրաստել մրցակիցներ։ Արիւնը մաքրելու, կազմը կազդուրելու համար եզական դեղ մ'է այս գինին։ Քիչ ժամանակուան մէջ ապահովապէս կը բուժէ տժգունութիւնը, անարիւնութիւնը, թոքի գեղձերուն (պէզ) ուռեցքը, խոցը (սըրաճա), մորթի հիւանդութիւններն ինչպէս էկզէմա, պալարներ եւն։ Նոյնպէս անհրաժեշտ է նաեւ ջերմէ (սըթմա) ապաքինողներուն եւ արիւնէ հատնող օրիորդներուն։ ՆՈՒՐԻՒ ԳԻՆԻՆ իր զօրաւոր բաղադրութեան շնորհիւ քիչ քանակութեամբ առնուելով կ'ազդէ, երկու ճաշերէ առաջ կէս կամ մէկ ապակի գդալ առնել, բաւական է։

Կը ծախուի Կ. Պոլսոյ եւ գաւառներու դեղարաններն ու դեղի մթերանոցներուն մէջ։

ՌՕՍԻԱ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1881 Մարտ 20ի Կայս. Իրատէով արտօնեալ
Ընկերութեան կեդրոնատեղին Բեդերսպուրկ
Ընկերութեան ապարանքը, Մեծ Մորսքայա 37
Ապահովագրութեանց ճիւղեր ՀՐԴԵՀ. — ԿԵԱՆՔ. — ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ. — ԱՐԿԱԾՔ.

Դրամագլուխ ամբողջովին վճարեալ	10,666,667 ֆր.
Երաշխաւորութեան գումար	104,000,000 »
1899ի հասոյթք	43,000,000 »
1881էն ի վեր Ընկերութիւնը իր ապահովագրեալներուն վճարած է մօտ	188,000,000 »

Ընկերութեանս քննիչ Արեւելից
Ա. ՀԻՒՐՄԻՒԶ

Ղալաթիա, Քարաքէօյ Հան (Նոր Մուսթաֆա Թէքէ)

Ընդհ. Գործակալ Թուրքիոյ համար
ԹԷՕՏՕՐ ԲԱՐԲԷՆ

ԶԿԱՐԴԱՑԱԾ ՄԻ՛ ԱՆՑՆԻՔ

Արիւնը, ոսկորները, ջիղերը, ականները եւ մարդուս կազմուածքին ուրիշ մասերն որոշեալ քանակութեամբ ՖՈՍՖՈՐ կ'պարունակեն որ մարմնոյն առողջութիւնը պահպանելով անդամներուն կանոնաւորապար աշխատելուն կ'օգնէ։ Այս ֆօսֆօրը որ թանկագին է մարդկային կազմուածքին համար, շատ անգամ կ'քիչնայ հիւանդութեանց պատճառով եւ այն անձն որ կորսնցուցած է մարմնոյն ֆօսֆորը, տեւական տկարութեանց կ'ենթարկուի։ Արիւնը կ'տկարանայ, ջիղերը կ'թուլնան, ծունկերը կ'կտրին ամբողջ մարմնոյն եւ գլխաւորաբար ուղեղին մէջ յոգնութիւն կ'զգայ, սիրտը կ'որոփէ եւ դեռ այս կարգի շատ մը անհանգստութիւններէ կը տառապի։

Կորսուած Ֆօսֆօրը կրկին արեան մէջ մտցնելու եւ զայն զօրացնելու համար, բժիշկներ երբ հնար մը կ'խորհէին, այս տարի Բարիզի առաջնակարգ քիմիագէտներէն Պիլեօն՝ Օ ՎՕ ԼԷՍԻԹԻՆ ՊԻԼԵՕՆ անուամբ դեղ մը հնարեց որ կորսուած ույժը կատարելապէս կ'մտցնէ արեան մէջ, ջիղերը, ոսկորներն ու մարդուս կազմուածքը կ'զօրացնէ, եւ մարմնոյն գերազարժութիւն կուտայ։ Անոնք որ իրենց ուղեղն ու մարմինն յոգնեցուցած են, անոնք որ զեղծումներու պատճառով անկարողութեան մատնուած են եւ վերջապէս անոնք որ ույժի պէտք ունին, անհրաժեշտ է որ Օ ՎՕ ԼԷՍԻԹԻՆ ՊԻԼԵՕՆ O vo-lécithine Billon առնեն։ Օ Վօ Լէսիթին Պիլեօնն որ ամէնէն ազդու դեղն է չաքարախտին, ընդունուած է Ֆրանսայի բժշկական Ակադեմիէն եւ կ'ծախուի մեծ դեղագործներու ու դեղավաճառներու քով։ 52—1

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ
1902

Գ. Պալթազարեան

Կեդրոնատեղի տպարան Կ. Մատթէոսեան, Ֆինճանճըլար, Կ. Պոլիս։ Կ'ծախուի բոլոր գրավաճառաց քով, համառօտը՝ երես 128, ղշ. 1, ընդարձակը՝ երես 320, ղշ. 3։ Պարունակութիւն (հայերէն եւ մասամբ թուրքերէն).—Օրացոյց տօնական, վիճակագրական գիտելիք, հեռագրական եւ թղթատարական կանոններ, բարոյավէպք, ընտանեկան, առողջապահական, երկրագործական, արհեստական, բժշկական, պատմական եւ գիտական կտորներ, զուարճալիք, միջազգային վիճակագրութիւն, թուաբանական նոր կանոններ, 30—12

ԱՊԱՌԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ
ԿԵՆԱՑ ԵՒ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

"ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐ" Վաճառատունը, Մահմուտ-Փաշա Թ. 299 եւ Թարագճըլար Թ. 112, ինչպէս որ ԱՊԱՌԻԿԻ առաւելութիւններն Հասարակութեան տրամադրութեան տակ դրած է շաբաթական կամ ամսական վճարումներով հագուստ գնելու համար, այնպէս ալ ԱՊԱՌԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ դիւրութիւնը կ'ընծայէ մի եւ նոյն պայմաններով, այսինքն՝

Շաբաթական կամ ամսական վճարումներով

ԹԷ՛ ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԵՒ ԹԷ՛ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ԱՒԵԼՈՐԴ ԾԱԽՔԻ, ՇԱՀՈՒ ԵՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Այս նպատակաւ, «ԿԱՐՄԻՐ ԱՔԼՈՐ» վաճառատունն համաձայնած է ապահովագրական մեծ ընկերութեանց հետ, որք հասարակութեան տրամադրութեան տակ կ'դնեն մէկ քանի ձեւով պայմանագրեր, ՀԱՒԱՍԱՐԱՊԷՍ ՇԱՀԱՒՈՐ։


Ամէն տեղեկութիւնք ձրի պիտի տրուին դիմողին, թէ՛ վերոյիշեալ վաճառատանց մէջ, եւ թէ՛ Թարագճըլար, Ճասէմի Խանի տակ, իր հաստատած մասնաւոր գրասենեկին մէջ։

ՀՐԴԵՀԻ դէմ ապահովագրութեան պայմանք են, զոր օրինակ, մէկ անգամէն վճարելի 200 ղրշ. բէյէմի համար շաբաթական 7 1/2 ղրշ. կամ ամսական 30 ղրշ.։

ԿԵՆԱՑ ապահովագրութեան պայմանք են, զոր օրինակ, մէկ անգամէն վճարելի 2,000 ղրշ. բէյէմի համար շաբաթական 50 ղրշ. կամ ամսական 200 ղրշ.։

ԱՐԻՍ ԵՒ ԸՆԿ.
ՃՈՊԵՃԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնուած 1889ին, Կ. Պոլիս, Թահթա-գալէ





ՎԱՃԱՌԱՆԻՇ

Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ առաջնակարգ մեքենաներով օժտեալ ու եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանուրբ հոտեղէններ ինչպէս նաեւ Թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ։ Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանաց դէմ մրցելու առաւելութեան կ'միացնէ գիներու գերազանց աժանութիւնը։ Փափաքողներուն քաթալոկը ձրի կ'ղրկուի։

Մեծաքանակ գնում ընել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ Օրոսդի Բաք եւ Կ. Խնճիճեան Որդիք վաճառատուններ, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով։

ԲԱՐԻԶ. — Պ. Պ. Լաքաուէէ Որդի եւ Ընկ. 28.—Ռիւ Շաթօտէօն.
ՊՈՄՊԱՅ. — Պ. Պ. Ապքար եւ Ընկ.
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. — Պ. Մ. Գալֆաեան
ԳԱՀԻՐԷ. — Պ. Հ. Ռոզանթալ.
ՌՈՒՍՃՈՒՔ. — Պ. Պ. Կ. Խնճիճեան Որդիք.
ՎԱՌՆԱ. — Պ. Կէռօն Արթէթի.
ԶՄԻՒՌՆԻԱ. — Պ. Հայրիկս Վաշինկ.
ՍԷԼԱՆԻԿ. — Պ. Տիտօ Ֆէրնանտէզ.
ԽՐՄԿԻՒՊ. — Պ. Մ. Քաֆուանօ.
ՊԷՅՐՈՒԹ. — Պ. Ֆրանքէլ Շիֆֆնէր.
ՍԱՄՍՈՆ. — Պ. Պ. Պետրոսեան Եղբարք.
ՏՐԱՊԻԶՈՆ. — Պ. Արիս Կ. Խնճիճեան.
ՍԵԲԱՍՏԻԱ. — Պ. Պ. Վ. եւ Ս. Մեծատուրեան.
ԻԶՄԻՏ. — Պ. Յակոբ Մոմճեան.
ՌՈՏՈՍԹՕ. — Պ. Յակոբ Բաօվաալ.



ՔՕՆԵԱՔ ՊԱՐՊԱՐԷՍՍՕ Մ. ԵՂԲԱՐՑ

Պարպարէսսօ Մ. Եղբարց յունական քօնեաքը զուտ խաղողի արտադրութիւն է որուն ճարտարարուեստական հսկայ գործարանն հիմնուած է 1840ին եւ փոխանցուած է իրենց հօրմէն։ 1875 եւ 1883ի յունական արուեստահանդէսը, 1889 ի Բարիզի, 1893ի Շիքակոյի ամերիկեան, 1895ի Պորտօի եւ 1900ի Բարիզի մեծ արուեստահանդէսները միահամուռ հաստատած են որ Պարպարէսսօ Մ. Եղբարց ժառանգաբար պատրաստած քօնեաքը թէ՛ հին է թէ՛ ընտիր եւ ի հաստատութիւն՝ վարձատրած են պաշտօնական մրցանակներով, նոյնը կ'հաստատեն նաեւ մեծահռչակ բժիշկներու եւ քիմիագէտներու վկայութիւնք։ Պապարէսսօ Մ. Եղբարց քօնեաքին տրուած ուրիշ բազմաթիւ վկայագրերն աւելորդ է թուել, քանի որ հանրածանօթ է այն եւ սպառումը՝ առաջին աստիճանի, մրցակիցներուն նախանձը գրգռելու չափ։

Մենաշնորհեալ պատուէ) Արծաթ Խաչ Ս. Փրկչի
) Հայթայթիչ արքայական տան Ն. Վեհ. Ցունաստանի թագուհւոյն


Ամէն յանձնարարութեան համար դիմել, Առ Պ. ԱԹԱՆԱՍ Ս. ՔԱԼՕԽՐԻՍԹՕ
Կ. Պոլիս. Ներկայացուցիչ Թուրքիոյ Կալաթա


Վաճառատուն Կարմիր Աքլոր.
299, Մահմուտ Փաշա, 299



ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ

Ապառիկ վաճառում։ Վճարելի չորս ամսուան մէջ։ Առանց կանխավճարի։





Երբ միշտ կ'ջանաք ձեր առողջութիւնը պահպանել, ուշադրութիւն ըրէք որ ձեր սիկառի թուղթերն ալ առողջապահիկ ըլլան։ Ուստի, ՏԻՒՔ եւ ՊՕՆ եւ ՃԵՐՄԱԿ ԿՈՂՔՈՎ ՊՕՆ, սիկառի ընտիր թուղթերը ջերմապէս կ'յանձնարարուին։ 52—33

ՄԵՐ ՄԵԾԱՅԱՐԳ ՅԱՃԱԽՈՐԴԱՑ
ԳԵՂԵՑԻԿ ՆՈՒԷՐ

ՎԱՔՍԷՆ խնայողական կանթեղն որ առանց ջուրի կ'վառի, կ'ծախուի ամէն տեղ, եւ նպարավաճառատուններէ։ Ուշադրութիւն ըրէք մեր այս վաճառանիշին որ ամէն տուփի վրայ պէտք է գտնուի,



այսյանձնարարելի խնայողական կանթեղը Ամսթերտամէ Պ. ՎԷՐՔԱՏ ԷԶՕՆԻ գործարանէն կ'բերենք. անարատ մեղրամոմէ են եւ 6, 8, 10 ժամ անընդհատ կ'վառին։ Այս կանթեղին պատրոյգներն ամէնէն բարձր աստիճան տաքութեան կ'դիմանան եւ ամառներն իսկ չեն աւրուիր։ Ջուրի պէտք չկայ զանոնք վառելու համար, ինչ որ թանկագին առաւելութիւն մ'է։ Ջուրն աղտ կ'գոյացնէ, մինչդեռ այս պատրոյգները պնակի մէջ դնել բաւական է։ Պայծառ լոյս մ'ունի եւ բնաւ չհոտիր։ Անոնք որ 24 տուփ վառեն եւ ներփակ գործածութեան եղանակը բացատրող գեղին թուղթերը ներկայացնեն, իբր նուէր պիտի ընդունին արծաթազօծ կամ ականազարդ փողկապի ասեղ մը թէ՛ արական եւ թէ իգական։ Կայսերական երկիրներու համար, գործարանին միակ մասնաճիւղը, Կ. Պոլիս, Զագմաքճըլար Գումրու խան թիւ 5—7 ԲԱԲԱԵԱՆՕՊՈՒԼՕ ԵՒ ԸՆԿ.։ 20—18

ԱՐՏՕՆԱՏԷՐ՝ ԲՈՒԶԱՆԴ ՔԷՕՍԷԵԱՆ
ՏՊԱՐԱՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ» ՕՐԱԳՐՈՑ
Կ. Պոլիս, Թիւ 23, 25, Պապը Ալի Ճատտէսի

ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի (77)

ՔՍԱՎԻԷ ՏԸ ՄՕՆԹԷՓԷՆ

ԴՐԱՄԻՆ ԶՈՀԵՐԸ

ԱՆԾԱՆՕԹ ԱՂՋԻԿՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԼԱԶԱՐԻՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

ԽԹ.

—Ալ աւելի՞ գէշ, ըսաւ պանդոկապետը։

=Ինչո՞ւ։

—Վասն զի ձեզ ծառայելը շատ դիւրին ըլլալով, արժանիք մը պիտի չգտնուի ձեր գոհ մնալուն մէջ։ Կը ցաւիմ։

Տեղակալը, հակառակ իր մտադրութեանը, ժպտեցաւ, սեղան նստաւ եւ ախորժով ճաշեց պատուական կերակուրները։ Հայր Ռիշառ գիտել տուաւ թէ իր հիւրին տրամադրութեան ներքեւ կ'դնէր Պօրտոյի եւ Պուրկօնեի գինի, որոց ընտիր տեսակէ ըլլալը կրնար երաշխաւորել։ Մարսէլ յայտարարեց որ երբեք այսքան լաւ ճաշած չէր։ Պանդոկապետը, այս գովեստին վրայ հրճուած, աղանդերը վերցուց եւ հիւրասիրելին առջեւ դրաւ գաւաթ մը խահուէ։ Տեղակալը սիկառ տուփն հանեց եւ ըսաւ.—Սիկառ մ'առէք, կ'աղաչեմ։ Վայրկեան մը խօսինք։ Քանի մը բաներ պիտի հարցնեմ ձեզի։

=Պատրաստ եմ, պատասխանեց Հայր Ռիշառ։

Ծ.

Թէեւ Շըվալ Պլանի տէրն յայտարարեց թէ իր սրճարանին մէջ զուտ Բարիզեան ոգեւորութիւն կ'տիրէր, բայց այդ իրիկուն ամենեւին ոգեւորութիւն չկար գիւղական շէնքին մէջ։ Միակ յաճախորդներն էին երկու շինականներ որք անկիւն մը նստած գարեջուր կ'խմէին եւ ցած ձայնով կ'խօսէին սակարկութեան մը պայմաններուն վրայ։ Այս գրեթէ բացարձակ միմնութիւնն ու լռութիւնը շատ նպաստաւոր էին այն տեսակցութեան զոր Մարսէլ Լօժիէ կ'փափաքէր ունենալ պանդոկապետին հետ։

—Ես, ինչպէս ըսի, արուեստագէտ եմ, սիրելի հիւրընկա՛լս, ըսաւ տեղակալը, եւ հոս եկած եմ Բնութեան վրայէն նկարներ գծելու համար։ Հիմա կ'հարցնեմ ձեզի թէ հա՞րկ է որ շատ հեռուներն երթամ գիւղանկարչի մը ուշադրութեան արժանի տեսարաններ գտնելու համար։

=Այդպիսի տեսարաններ հոս ամէն տեղ կ'գտնէք, պատասխանեց պանդոկապետը։ Մեր գիւղը գրեթէ անտառին մէջ է, ինչպէս անշուշտ գիտցեք Օրլէանէ եկած ատեննիդ։ Հոս կ'վխտան աշխարհի չափ հին հսկայ ծառեր, խոնոր ապառաժներ եւ պզտիկ առուակներ։ Իմացած եմ որ նկարիչներն այս տեսակ բաներ կ'փնտռեն ընդօրինակելու համար։

—Ջէք սխալիր։ Նկարչագեղ աւերակներ կա՞ն մօտերը։

=Աւերակնե՞ր, կրկնեց Հայր Ռիշառ։

—Այսինքն հին ժամանակներու դղեակներ, որք երեք մասով քանդուած եւ թաղեղներով ծածկուած ըլլան։

Պանդոկապետը գլուխն երերցուց։

—Ո՛չ։ Գէթ ես չեմ գիտեր, պատասխանեց։ Իբր դղեակ, Դուռ տիւ Ռուան ունինք, որ փա՛ռք Աստուծոյ քանդուած չէ եւ քիչ ատենէն ալ քանդուելիք չունի, վասն զի նորանոր է։

=Ըսին ինձ թէ շատ գեղեցիկ շէնք մ'է։

—Հիանալի՛։ Լուաւէի մէջ, Կորտի դղեակը միայն կայ որ կարենայ մրցիլ անոր հետ։

=Դարաստանն ալ գովեցին։

—Ա՛հ, աննման է։ Ցիսո՛ւն հէքդար,(*) Միւսիւ՛, պատերով գոցուած։ Անտառներ, ծառուղիներ, առուակներ, արձաններ, պուրակ։ Երկրային իշխանութիւն մը վերջապէս։

=Կ'կարծէ՞ք որ արտօնութիւն տրուի ինձ այս դարաստանը պտտելու։

—Այդ մասին որոշապէս կրնամ պատասխանել ձեզ։ Երբեք մտքերնէդ մի՛ անցընէք այդպիսի բան մը։

=Ինչո՞ւ։ Ընդհանրապէս արուեստագէտներն ու օտարականները, եթէ խնդրանք ընեն, կրնան արտօնուիլ Դուռ տիւ Ռուայի դարաստանին չափ նշանաւոր դարաստաններ այցելելու։

—Գիտե՛մ։ Մարքիզին ողջութեանն այսպէս էր։ Պահապանն հրաման ունէր շնորհքով մարդիկը պտտցնել դարաստանին մէջ։

=Հի՞մա։

—Եօթն ամսէ ի վեր, այսինքն Տիկին Մարքիզուհիին այրի մնալէն ի վեր, խիստ հրաման տրուած է մարդ ներս չառնել առանց բացառութեան։ Տիկինը բացարձակ միմնութեան մը մէջ կ'ապրի։

=Բացարձա՞կ։

—Այո՛։ Ասկէ աւելին չըլլար։ Տիկին Մարքիզուհին միայն իր հայրը, երկու քոյրերն եւ քեռայրը կ'ընդունի։

=Տիկին տը լա Դուռ տիւ Ռուա անշուշտ շատ կ'ցաւի ամուսնոյն մահուան վրայ։

—Կ'երեւի։ Մարքիզը 40 տարու մեծ էր կնոջմէն, բայց շատ անուշ մարդ էր։ Տիկինն անշուշտ կ'սիրէր զայն։ Այսօր օրինակելի կեանք մը կ'անցընէ եւ չի խորհիր իր ազատութենէն օգտուիլ, ինչպէս պիտի ընէին իր տեղը գտնուողները։

=Տիկին Մարքիզուհին գեղանի՞ է։

—20 տարու չկայ, Միւսիւ՛։

=Գեղեցկութիւնը կ'գովեն։

—Որչափ գովեն քիչ է։ Տիկին Մարքիզուհին շատ գեղեցիկ է։ Ես իմ անձնական ճաշակովս մէկ թերութիւն միայն կ'գտնեմ անոր վրայ։ Մազերը պղինձի գոյն ունին։ Բայց մարդեր կան որք կ'սիրեն այդ գոյնը։ Դուք կը սիրէ՞ք, Միւսիւ՛, դուք որ արուեստագէտ էք։

=Անիկա կախում ունի ա՛յն գլխէն որուն վրայ կ'գտնուին, պատասխանեց Մարսէլ։ Մնաց որ, կ'յուսամ անձամբ դատել այդ գեղեցկութիւնը որու համար հիանալի է կ'ըսէք։

—Ի՞նչպէս։ Դատելու համար պէտք է տեսնել։

=Անշուշտ։

—Եւ դուք պիտի չտեսնէք զայն։

=Իր դղեակին մէջ պիտի չտեսնեմ, բայց անշուշտ ուրիշ տեղ կրնամ տեսնել։

—Ո՞ւր։

=Ժամերն, իր կառքին մէջ, երբ պտոյտի ելնէ։ Տիկին Մարքիզուհին որքան ալ սիրահար ըլլայ առանձնութեան, անշուշտ երբեմն դուրս կ'ելնէ իր դարաստանին սահմաններէն։

—Հոս է որ կ'սխալիք։ Եթէ 5—6 ամիս առաջ եկած ըլլայիք, թերեւս հաւանականութիւն ունենայիք անոր հանդիպելու։ Բայց հիմա դարաստանէն դուրս չելներ այլ եւս։

=Երբե՞ք։

—Երբե՛ք, երբե՛ք։ Եւ դուրս չելնելու զօրաւոր պատճառներ ունի։

=Ի՞նչ։

—Բժիշկին պատուէրը։

—Հիւա՞նդ է, պոռաց Մարսէլ։

=Ինչպէս կ'ըլլան ընդհանրապէս մայր ըլլալու վիճակին ունեցողները։

Այս խօսքերուն վրայ երիտասարդ տեղակալը չլացուած մ'ունեցաւ։ Կարծեց թէ ելեկտրական ցնցում մ'ընդունեց։—Ի՞նչ, հարցուց փոխուած ձայնով մը։

=Այո՛, Միւսիւ՛, եւ անշուշտ իրաւունք ունի։ Մարքիզին մեռնելէն 7 ամիս եղաւ։ Հետեւապէս ծնունդը տեղի պիտի ունենայ օրէնքին տրամադրած պայմանաժամին մէջ։ Եթէ Աստուած կամենայ ու նորածինը մանչ ըլլայ, Դուռ տիւ Ռուայի անունը պիտի չմարի։ Խե՜ղճ Մարքիզը։ Որքա՜ն ուրախ պիտի ըլլար։ Աղջի՞կ պուպրիկ մը։ Իր երազն էր աս։ Պիտի երիտասարդանա՞ր։

Հայր Ռիշառ պիտի շարունակէր այսպէս։ Մարսէլ այլ եւս չէր լսեր։ Իր մտածումին մէջ թաղուած էր։ Լոյս մը ծագեցաւ մտքին մէջ։ Կ'ըսէր.—Անլուծելի կապ մը կայ մէջերնիս, զոր անիկա պիտի չկրնայ խզել։ Պանդոկապետը միշտ կ'խօսէր։ Ցանկարծ Մարսէլ գլուխը վերցուց եւ նորէն մտիկ ըրաւ։ Հայր Ռիշառ սա ուշագրաւ խօսքն ըսած էր.—Կրնաք երեւակայել թէ Մարքիզին ժառանգորդն որքա՜ն տխրեցաւ այս անակնկալ լուրն առնելով։ Ջեմ ճանչնար այդ մարդը, բայց միտքս բերելով իր առած դէմքը, խնդալս չեմ կրնար բռնել։

=Ժառանգո՞րդը, կրկնեց Մարսէլ։ Ժառանգո՞րդ կայ։

—Այո՛, Միւսիւ՛։

=Ուրեմն, Տիկին Մարքիզուհին չէ՞ր հրիտակառուն։

—Ո՛չ։

=Ինչպէ՞ս կ'ըլլայ այդ։

—Խնդիրը շատ կնճռոտ է եւ ամէն մարդ զարմացաւ, վասն զի ամէնքն ալ կ'կարծէին թէ Մարքիզն իր ամբողջ հարստութիւնը կնոջը պիտի ձգէր։ Բայց ոչ։ Գործին մէջ կտակ մը կար եւ հանդուցեալ Մարքիզը, այդ կտակով, կ'յայտարարէր թէ անզաւակ մեռնելու պարագային իր հարստութիւնը կ'թողուր հեռաւոր ազգականի մը, մի ոմն կոմս տը լա Դուռ տիւ Ռուա, զոր հոս ճանչցող չկայ։ Տիկին Մարքիզուհիին կ'մնար իր անձնական հարստութիւնը։

=Կարելի՞ է, մրմռաց տեղակալը։

—Այո՛, կարելի եւ ստոյգ։ Մ. Ժօժառ, Օրլէանցի նօտարը, Մարքիզին մահուան յաջորդ օրը կարդացած էր կտակագիրը։ Քանի մը հոգիի ըսաւ եւ քիչ քիչ խնդիրը տարածուեցաւ։ Ամիս մը ետքը, ամէն մարդ իրողութիւնը գիտէր։ Տիկին Մարքիզուհին սիրելի է ամէնուն։

(Շար.) Թարգմ. Փ. ՇԻՐԱԿԱՑԻ

(*) — Մէկ հէքդարը տասն հազար քառ. մեդր է։